Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1770

1999

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԵԱՑ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻՑ

ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆՆԵՐԻ

ՌԱՑՎԻԼՔ

ԵՒ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆՔԸ

ԳՐԵԱՑ ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ

1354

МОСКВА.
Въ Университетской типографіи (Катковъ и К°), на Страстн. бульв.
1868.

Հմ. 1778

41720-ao

Дозволено Цензурою. С.-Петербургъ. 10 Января 1868 года.

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ԳՐԻԳՈՐ ՏԷՐ ՄԿՐՏՉԵԱՆՑ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ ԵՒ ԵՌԱՆԳՈՒՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ի ԴԻՄԱՑ ԵԿՈՒԼԵՑՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵՒՆ

ՆՈՒԻՐՈՒՄԵՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՔԸ

Եթէ նախախնամութեան անօրինութեամբ Հանդուցեալս կենդանութեան ժամանակը անհասանելի մնաց նորա յառաջադրեալ նպատակը Ազուլեաց ապագայ սերնդոց լուսաւորութեան համար, թող ուրեմն նորա անմահ հոգին ընդունի այժմ այս նկարագրութիւնը ՝ի լուսն իւր փափաքին և թող ցնծայ նա այս յօդուածի պարունակութեան աւետեաքը։

ՎԵՐԻՆ ԷԳՈՒԼԵԱՑ

ԵՐԿՈՒ ՍԵՌՈՒՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ

ԲԱՑՈՒԻԼԸ ԵՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԲԸ։

Շատ անգամ լսել եմ թէ զանազան խելօք մարդերից և թէ ազգային օրագիրներից մեր ազգի անուսումնասիրութեան մասին։ Եւրոպական ազգերից շատերն ևս այս կարծիքն ունին մեր վերայ։

Երկար մտածելուց յետոյ ես մի քանի հետևողութիւններ եմ արել այս կասկածների անհիմն լինելու համար և ամէն ժամանակ փաստեր եմ ունեցել իմ կարծիքս ճշմարտելու։ Այսոց ազգը ոչ մի օր, ոչ մի դար յետ չէ մնացել կրթութեան մէջ օտար ազգերից, եթէ քննենք նորա երկրի դիրքը, սահմանակից ազգերը, քաղաքական հանգամանքը և այլ յարակից պատճառները։ որ ուրիշ ոչինչ ևս չլինի, քրիստոնէութիւնը մեզ մեծ ապացոյց է։ Իմ միտքս այս նիւթիս վրայ երկարօրէն խօսելը չէ։ ես միայն ուզում եմ մի ներկայ փաստ ևս յաւելացնել իմ կարծիքիս հաստատութեան համար և վերջումը յայտնեմ մի քանի բառով, թէ ո՞վ է մեղաւոր և ի՞նչ է պատճառը, որ յետադիմութիւն-

ներ զեռ լինում են մեր մէջ և պատճառ են տալիս շատերին մտածելու և գրելու Հայոց անուսումնասիրութեան համար։

Խօսքս Գողթան գաւառի Աղուլեաց Յողովրդեան այս 1867 թուի ազգային յառաջադիմութեան համար արած ճիգն է, որ պիտի մանրամասն գրեմ։

Գողթան գաւառը հնուց յայտնի է Հայոց աղգի տարեգրումը իբրև մի բանաստեղծից գաւառ, բայց վերջումը կորցրել է իւր այս յատկութիւնները, երևի զանազան հանգամանքների պատճառաւ և ստացել է մի ուրիշ ընդունակութիւն՝ Հային սեպհական առևտրականութիւնը։ Ներկայիս Գողթան գաւառի Աղուլիսները *) հաստատ ապացոյց են մեր համար։ Բաց 'ի իւրեանց բանաստեղծական քանքարից, Գողթանեցիք կորցրել են և իւրեանց մայրենի պարզ լեզուն և խօսում են բոլորովին ուրիշ հայերէնից հեռի բարբառով։ Այս վերջին տարիներում Աղուլեցիների Եւրոպայի և Ռուսաստանի հետ ունեցած առևտրական յարաբերութիւնքը և երթևեկութիւնքը նոցա զգալի էին արել իւրեանց մայրենի լեզուի մշակութեան պակասութիւնը և ուսման կարևորութիւնը։ Մի քանի անգամ ձեռն են տվել զանազան իրաւանց ներքոյ օրինաւոր ուսում նարանի հաստատութեան, բայց անյաջող ելք են ունեցել և իւրեանց նպատակին անյարմար են գտել։

*) Աղուլիսները երկու են, Վերին և Ներքին. իմ խօսքս Վերին Աղուլեան է։ Ներքին Աղուլեան ևս յետ չէ մնացել իւր ուսումնասիրութեամբ. մի քանի տարի է, այն տեղ կայ ուսումնարան մի բարեմիտ քահանայի, մի ազգասէր աշխարհականի և մի ուսումնասէր վարժապետի հոգացողութեան ներքոյ։

Անցեալ 1863 թուին այս խնդիրը զարթուցել է Աղուլեաց մէջ այն տեղացի հանգուցեալ Գրիգոր Տէր Մկրտչեան ուսումնասէր և եռանդուն երիտասարդը և ինչպէս երևում է նորա խօսեցած տեսարդը և ինչպէս երևում է նորա խօսեցած տեսարանութիւնից, գրած կանոնագրութիւնից և մեծ եռանդեամբ յառաջ եկած ստորագրութեան գումարից, մեծ հոգս է տարել կանգնեցնել Աղուլիսումը մի օրինաւոր դպրոց։

Այս տեղ ես պարտք եմ համարում գնել նորա ճառը, որ գրանով երևի հանգուցեալ աշխատութիւնը։ Իսկ կանոնագրութիւնը կը գնենք իւր յարմար տեղումը։

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԵԱՑ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ։

Յիսուս Քրիստոսը, պատմելով քանքարների առակը, մեզ պարզապէս ցոյց տուեց, որ Աստուած, մեզ ստեղծելով և բաշխելով իւր քանքարները, որ է իւր բանականութիւնը, մեր վերայ պարտաւորութիւն դրեց կատարելագործուելու մինչև անվերջ։ Միւս կողմանէ մարդկութեան պատմութեան հաստ ծրարը ցոյց է տալիս՝ թէ որքան զօրեղ են այդ քանքարները, որ Աստուած իւր էութիւնից մեզ հաղորդեց և մեք ունենալով բաղդաւորութիւն լինել տասն և իններորդ դարու որդիքը, երբ մարդկային կատարելագործութիւնը այնքան զօրացել է, որ արդէն սկսել է քայլել, ոչ փոքր փոքր քայլերով, այլ ահագին մեծ մեծ մղոնական քայլերով, ասում եմ, մեք այնպիսի ժամանակում չունենք ոչինչ իրաւունք մարդկային յառաջադիմութեան

այս հեղեղին նայել անտարբերութեամբ և մոռնա-
կից չը գտանուել նորանում, եթէ չը կամինք լսել
այն ահարկու խօսքերը. ,,Օ՜ առայ չար և վատ,
պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ 'ի սեղանա-
ւորս և ես եկեալ, տոկոսօք պահանջէի զ�: Արդ
առէք 'ի զմանէ զքանքարդ և տուք այնմ որ ունիցի
զտասն քանքարն: Զի ամենայնի որ ունիցի, տա-
ցի և յաւելցի և որ ոչն ունիցի և, զոր ունիցին,
բարձցի 'ի նմանէ՛՛:

Եւ իրաւ, մեք ստանալով Բարձրեալից բանա-
կանութիւն, որ է նորա պատկերը և որից զուրկ
են միւս կենդանիները, ասում եմ, մեք չունենք ոչ-
ինչ իրաւունք թողել այդ աստուածային մասնիկ-
ները հողի տակին և չը շահեցնել նրանց: Ընդհա-
կառակն մեր անհրաժեշտ պարտաւորութիւնն է մե-
ծացնել և շահեցնել նորան մեր մէջ, որ մնանենք
մեր Ստեղծողին և գտանենք մեր բարեբաղդութիւնը,
որովհետև նա է վերին աղբիւր ամենայն բարեաց:

Եթէ մարդս ունի իւր մէջ աստուածային գո-
յութիւն, ապա և ինքան սիրող պէտք է լինի ա-
մենայն բարեաց, որք միայն կազմուումն նորա բարձր
և անսահման գոյութիւնը: Եւ միւս կողմանէ աշ-
խարհումս ոչ ստեղծուածը ունի այնքան բարի սկզ-
բունք, որքան մարդը, որին բարձրեալը հաղորդած
է իւր սեպհական էութիւնից:

Այս սկզբունքներից մեկը և գլխաւորն է սերը,
որ է լծակ ամենայն բարի և օգտաւէտ ձեռնար-
կութեանց: Եւ իրաւ մարդկութեան կենաց սկզբից
մինչև այժմ անհերևակայելի է կեանք առանց ընկե-
րութեան: Սկզբից մարդիկ աստուածային ազգե-

ցութեամբ սէր են զգացել դէպ 'ի իրեար և կազմել են
ընկերութիւններ միմեանց օգնելու համար: Իսկ սո-
րանից բղխում է այն ճշմարտութիւնը, որ մարդկային
հասարակութիւնը կարող է իւր բարեկաւութիւնը
գտանել միայն, կատարելագործելով և մնանե-
լով ամենայն բարեաց վերին Աղբիւրին, որի մոտ
չարը անհերևակայելի է:

Այսպէս Աստուծոյ բարձր և անսահման բարու-
թիւնը մեզ ստեղծելով՝ տուեց մեզ կարելութիւն
կատարելագործուել, որ հասնենք բարեբաղդութեան:
Ուրեմն ինքան առաւել մեք պարտ ենք լինել այս
գործում միմեանց օգնական, երբ ամենեցունցս բա-
րեկաւութիւնը կախեալ է ամենեցունս կատարելա-
գործութիւնից: Այսպիսի մտքերով ուղղուած, մեք
1851 թուականին հիմնեցինք վարժարան մանկտեաց
կրթութեան համար, որ և այժմ ձեռնարկել ենք
նորան կատարելագործութիւնը: Այս կատարելա-
գործութեան գլխաւոր նպատակն էր, ինչպէս ցոյց է
տուած այս կանոնադրութեան մէջ, մանուկները
զօրացնել գիտութեամբ և մանաւանդ բարոյականու-
թեամբ, որ ժամանակաւ հասարակութեան համար
օգտաւէտ անդամներ լինին: Ըստ կարելութեան հաս-
նելով նշանակած նպատակին, մեք կարող ենք հա-
ւատի լինել, որ կատարել ենք Աստուծոյ և մարդ-
կութեան դատաստանի առաջև ամենահաճոյ գործ:
Այս գործը լինելով մշանջենաւոր, նորանում գոր-
ծակից գտնուողներից ամէն մեկը կարող է հաւաս-
տի լինել, ինչպէս ասում է երևելի հանճարը, որ
նա թողեց իւր համար ապագայ մարդկային սե-
բունդի առաջև այնպիսի մի յիշատակ, որ ամե-

նայն քարից և մեռաղից ամուր է, որին նա և ժամանակը, որ միայն կարող է փլացնել մեռաղը և քարը, չունի ոչինչ զօրութիւն փլացնելու։

Գրիգոր Տէր-Մկրտչեանց։

Այս ուսումնական երիտասարդը նուիրել է, ինչպէս և ճառից երևում է, իւր անձը Աղուլիսի վերակենդանութեանը, բայց անգութ հարուածը մահի զրկել է Աղուլիսը այս փառքից։ Եւ ո՞ր ազգին զգալի չէ լինելու այսպիսիների պակասութիւնը։

Անգուցեոյ մահը թէ և մի ժամանակ նուազացրել է Աղուլեցւոց սրտի ցանկութիւնը, բայց բոլորովին չի հանգցրել եռանդը։ Նորա վառած կրակի կայծերը բորբոքվել են Աղուլեցւոց մէջ և մի քանի անգամ ժողովներ են արել ուսումնարան բանալու։ Զանազան տեղեր են գրել, տեսուչ և վարժապետներ են խնդրել և ոչ մեկ տեղից չեն ունեցել բաւականութիւն, ում և առաջարկել են մեր ազգի ուսումնասէր երիտասարդներից, ամենքը հրաժարվել են։ Եւ ի՞նչ անէին խեղճ երիտասարդները, ո՞ր սրտով գնային, քանի՞ տեղերում արգելքներ դան այսպիսի բարենպատակ գործերը, քանի՞ տեղերից հալածվեցան ճշմարտասէրները հեբէոպիկոս և լո-պեբրական մականունն ևս ստացած։ . . .

Ինչ և իցէ, Աղուլեցիք ամէն կողմից յոյսերը կտրումեն և սպասումեն դիպող ժամանակի։

Այս 1867 թուին անձնական գործով պատահումէ ինձ հանդիպիլ Աղուլիս։ անցաթուղթս պատրաստ դէպ 'ի պարսկաստան և ճանապարհի հոգսերը քաշած, ես յոյս ունէի շուտով սահմանն անցնել, բայց Սախսխնամութեան անօրէնութիւնը այլ է եղել։

Գուցէ այս տեղ շատերը մեղադրեն ինձ, որ ես իմ գործերս կապում եմ Աղուլեաց Ուսումնարանաց հետ, կամ գուցէ նմանեցնեն ինձ Ենիու և Ալչմիածնի այցելուին, որ իւր պատմութեան մեծ մասը լցրած է իւր կերած խմածներովն և Ալեքսանդրապոլ ու Աշտարակ ստացած պատիւներովը *)։ այլ ընթերցողքը յուսամ անմեղադիր կացուցանեն ինձ, եթէ շարունակեն հետևելքս և հաւատան, որ անհնար էր ինձ չյիշել իմ անունս, և ինչի՞ չպիտի յիշեի, քանի որ խօսքս ճշմարտութիւն պիտի լինի և ոչ սնապարծ ինքնասիրութիւն։

Յարգոյ Վրիստափոր Տէր Մկրտչեանցի՝ Անգուցեալ Գրիգորի եղբօր հետ ունեցած խօսակցութիւնս ինձ մանրամասն տեղեկութիւն տուեց Աղուլեցւոց ուսումնասիրութեան համար և նորա յուսահատական խօսքերը և դէպ 'ի մեր ուսումնասէր երիտասարդները ունեցած գաղափարները, նորանց փողի ծառայելու կամ ասպիճանի ցանկանալու, ու այսպիսի տեղերից և ազգային առաջարկութիւններից փախչելու մասին, ինձ խրախուսեցին հասկացնել Պարոնին մեր երիտասարդաց հրաժարվելու պատճառը։

Ոչ ոք չէ մեղադրում Պարոնին այս կարծիքն ունենալ մեր ուսումնասիրաց վերայ։ ոչ կարէր իմանալ թէ խեղճերի սրտումն ի՞նչ կրակ է թաղցրած և իւրեանց այրում, իւրեանց ազգի մէջ ուսումը տարածելու համար, բայց ի՞նչ անես։ . . .

---

*) Տես կռունկ Հայաստանի։

Յարգոյ Պարոնից ստանալով թոյլատուութիւն կարդալ իւր երջանկայիշատակ եղբօր գրած կանոնադրութիւնը, միւս օրը պատիւ ունեցայ Ադուլեցւոց հրաւիրմամբ ներկայ գտնուիլ Իւրեանց մէկ ժողովին։

Այստեղ հաստատ իմանալով ժողովրդի ցանկութիւնը մի օրինաւոր ուսումնարան ունենալու համար, իմ կողմից ըստ իմն հասկացողութեան խօսեցայ միջոցների մասին և լսելով ժողովրդի խոստումը նիւթապէս Ուսումնարանի վիճակն ապահովացնելու մասին, իմ կողմից խոստացայ ճարել Իւրեանց համար մի բարենպատակ տեսուչ, որ կը դայ իւր ազգի օգտին ցանկացող վարժապետներով, մի և նոյն ժամանակն էլ ուզեցան ունենալ և մի ազգային օրիորդաց ուսումնարան *)։ Ուսումնածաւրաւ Ադուլեցիք խնդրեցին մի քանի օր յետ թողուլ ճանապարհորդութիւնս, յառաջ տանել ըստ ներկայ հանգամանաց անգուցելու կանոնադրութիւնը և գրել նոյնպէս մի կանոնադրութիւն օրիորդաց դպրոցի համար։

Այս մի քաղցր պարտք էր, որ ամէն մարդ սիրով պիտի կատարէր։ Կանոնադրութիւնքը պատրաստուեցան կարճ միջոցում և մի շաբաթի մէջ չորս անգամ ժողովք եղաւ այս բաների համար մտածելու։

*) Ադուլիսում կային երկու սեռից ուսումնարաններ Քալանթարեանց Պարոն Հայրապետին սեպհականութիւն. ես մեծ սիրով այցելութիւն արի այդ ուսումնարաններին. այն տեղերում ուսուցանվում էին նախակրթական ուսումն։ Ադուլեցւոց ցանկացածը այդ քանը չէր և Պարոն Քալանթարեանցի ուսումնարանքը չէին կարող լցնել Ադուլեցւոց ցանկութիւնը. բայց 'ի հարկէ Ադուլեցիք պիտի շնորհակալ լինին Պարոն Քալանթարեանցին որ իւրեանց մանկունք և աղջիկները դնէ ծանօթացուցել է իւրեանց ազգի այբուբենքին։

ծելու։ Գովելի է այս տեղ Ադուլեցւոց եռանդը, թէ ինչ մեծ սիրով էին ամէն ժամանակ հաւաքվում։ Ոչ պակաս ուրախութիւն և մասնակցութիւն են ցոյց տուել և Ադուլիսի տիկնայքը՝ լսելով և իւրեանց սեռի ուսումնարանի բացման խորհուրդը, խոստացել են իւրեանց կողմից խնդրամատոյց լինել վեհափառ Կաթողիկոսին։

Կանոնադրութիւնքը արտագրվեցան և հետևեցաւ դոցա ստորագրութիւնը ուսումնարանին մայր գումար պատրաստելու համար։ Երկար դրուատներ էին հարկաւոր Ադուլեցւոց առատաձեռն ազգասիրական զոհաբերութեանց համար, բայց ես լռութեամբ եմ անցնում և ընթերցողին եմ թողնում վերջումը դատել, թէ ինչպէս երկու շաբաթի մէջ 25000 մանէթ ստորագրվեցան։

Ուսումնարանի կանոնադրութեան զօրութեամբը հարկաւոր էր երկու խորհրդարան, երեսփոխանական ժողով և գործարարութիւն, Ուսումնարանական կառավարութեան համար. մի և նոյն ժամանակը քուէարկութեամբ այս երկու խորհրդարանի անդամքն ևս ընտրվեցան։ Այնուհետև ուսումնարանի կառավարութիւնը յանձն առան նորընտիր յարգոյ գործարարքը — Աղայ Մկրտիչ Տէր — Մկրտիչեանց, Պարոն Այրապետ Երասխանեանց, Պարոն Բաղդասար Փանեանց և Պարոն Յովհաննէս Կոստանդինեանց։

Ահա երկու ուսումնարանաց կանոնադրութիւնքն ևս գնում ենք այս տեղ. սոքա պարզ ցոյց են տալի Ադուլեցւոց իւրեանց պարտքը ճանաչելը։

ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՎԼԵՐԻՆ ԱԳՈՒԼԵԱՑ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ։

1· Ուսումնարանս կոչվումէ Վ՝երին Ագուլեաց Հայոց Հոգևոր Ուսումնարան։

2· Ուսումնարանիս նպատակն է պատրաստել Վ՝երին Ագուլեաց Հայ հասարակութեան համար արժանաւոր եկեղեցական պաշտօնեաներ, կրթել մանկութիւնը Հայոց ուղղափառ սուրբ և առաքելական Եկեղեցւոյ կրօնի և դաւանութեան մէջ և լուսաւորել նոցա միտքը գիտութեան և բարոյականութեան լուսով։

3· Ուսումնարանս հիմնվումէ այստեղի Հայ հասարակութեան զոհաբերութեամբք և ուրիշ զանազան արդիւնքներից, սրբոյն Թովմայի առաքելոյ վանքումը, որ է Վ՝երին Ագուլիսում։

Ծանօթութիւն. Ուսումնարանը այս վանքումը տեղաւորելու համար Հասարակութիւնը ստացել է թոյլտուութեան կոնդակ երջանկայիշատակ Կաթողիկոս Տերտէս Հինդերոդից։

4· Բաց՝ի վերոգրեալ զոհաբերութիւններից ընդունվումէ և որդեգրական զոհաբերութիւն, որի տոկոսեօքը ուսանումեն աղքատ երեխայք և կոչվումեն որդեգիրք զոհաբերող բարերարին։ Այսպիսի որդեգրաց չքաւորութեան համար պիտի հաւասար լինի Հոգարարձութիւնը։

5· Բարերարքը որդեգիրք ընդունելու համար ընծայումեն միանգամ վեց հարիւր մանէթ, որի տոկոսեօքը մշտնջենաւոր պահվում են ընծայաբերող բարերարաց որդեգիրքը։

Ծանօթ. Բարերարաց որդեգրաց թիւը պէտք է անպատճառ լեքը լինի։

6· Ուսումնարանս հաստատվումէ ամենայն Հայոց Ծայրագոյն Կաթուղիկոսից և գտնվումէ անմիջապէս Նորին Վ՝եհափառութեան բարձր հովանաւորութեան ներքոյ։

7· Ուսումնարանս հիմնվումէ երթևեկ աշակերտաց համար։

8· Ուսումնարանս պէտք է ունենայ իւր առանձին կնիքը։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ։

9· Ուսումնարանի կառավարիչքը են Երեսփոխական ժողովը, Հոգաբարձուները, Տեսուչը և Վարժապետական խորհուրդը։

10· Երեսփոխանական ժողովը հաստատումէ Հասարակութիւնը, ընտրելով իւր միջից քուէարկութեամբ կամ, ինչպէս յարմար կը համարվի, քսան և հինգ մարդ, որոց և տալիս է իրաւունք իւր կողմից հսկել Ուսումնարանի ամենայն բարեկարգութեանց վերայ և ընտրել ու արձակել Հոգաբարձուները. մի խօսքով, երեսփոխանական ժողովը է նոյն ինքը Հասարակութիւնը։

11· Հոգաբարձուները ընտրվումեն քուէարկութեամբ երեսփոխանական ժողովոց։

12· Հոգաբարձուաց թիւը պէտք է լինի չորս, բաց

'ի Տեսչից, որ է նոյնպէս անդամ ՝ոգաբարձութեան, որով լինում են հինգ։

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

13· Երեսփոխանական ժողովի պարտաւորութիւնն է վեց ամսու մէջ մի անդամ քննել ՝ոգաբարձութեան հաշիւները, հաստատել հոգաբարձութիւնից առաջարկած ուսումնարանի տարեկան բոլոր ծախուց նախագաղափարը և տարին մի անդամ ՝ոգաբարձուների հետ միասին ամենայն հաշիւները՝ Ուսումնարանին վերաբերեալ՝ ներկայացնել ՝ասարակութեանը։

14· Երեսփոխանական ժողովը պէտք է ընտրէ երկու տարին մի անդամ հոգաբարձուներ։

15· Երեսփոխանական ժողովի ամենայն վճիռները լինում են ըստ բազմութեան ձայնից, որ պէտք է ընդունելի լինի առանց վիճաբանութեան։

16· Երեսփոխանները ընտրվումն ՝ասարակութեան միջից երկու տարին մի անդամ։

17· ՝ոգաբարձուների պարտաւորութիւնն է հրսկել ամենայն կերպ ուսումնարանի բարեկարգութեան վերայ, նորա արդիւնքների համար, աշխատել դտանել նոր արդեանց աղբիւրներ և մանաւանդ իւրեանց պատասխանատվութեամբ շահեցնել ուսումնարանի դրամագլուխը։

18· Ուսումնարանի դրամագլուխը և օգուտը հաստատ պահելու համար, ՝ոգաբարձուներից պահանջվում մի միայն հարիւրին ութ տոկոս. իսկ եթէ պատահի ուսումնարանի դրամագլխից որպիսի և իցէ

կորուստ, այսինքն, եթէ պարտաւորեալը չէարոդանայ լցնել իւր պարտքը և տոկոսը, ՝ոգաբարձուքը պարտաւոր են իւրանցից լրացնել։

19· ՝ոգաբարձուների պարտաւորութիւնն է շաբաթը միանդամ մի նշանակեալ օր ժողով առնել ուսումնարանում, ուր կը մտածեն ուսումնարանի պիտոյքների, օգտի, յառաջադիմութեան, ել և մտից, և ամենայն բարեկարգութեանց վերայ, արձանագրել տալով իւրեանց ամենայն անօրէնութիւնները, և ամիսը միանդամ վերահասութիւն գործել դանձապետ ՝ոգաբարձուի հաշուետուներին։

20· ՝ոգաբարձուքը պէտք է ունենան իւրեանց անդամներից մի դանձապետ, որին պէտք է յանձնեն ուսումնարանի ել և մտից մատեանները։

21· ՝ոգաբարձուքը պարտաւոր են կազմել ուսումնարանի առաջիկայ տարվան բոլոր ծախուց նախագաղափարը և առաջարկել երեսփոխանական ժողովի հաստատութեանը։

22· ՝ոգաբարձուքը պարտաւոր են ուսումնարանի տարեկան բոլոր հաշիւները ուսումնարանի հանդիսից մի քանի օր յառաջ Երեսփոխանական ժողովին ներկայացնելուց յետոյ՝ տարածել մի քանի օրինակ ՝ասարակութեան մէջ, որ ուսումնարանի հանդիսի մէջ տարեկան հաշիւները կարդալուց յետոյ ՝ասարակութիւնը կարողանայ առնել իւր նկատողութիւնը։

23· ՝ոգաբարձուքը պարտաւոր են Երեսփոխանական ժողովի վաւերացրած ուսումնարանի տարեկան բոլոր հաշիւները և յառաջադիմութիւնները ներկայացնել Նորին Վեհափառութեանը։

24. Նախագաղափարով որոշեալ ամենայն ծախքերը կ'առնեն Հոգաբարձուքը, իսկ անակնկալ ծախքերի համար նախագաղափար կազմվելուս մի գումար է նշանակվում։

25. Հոգաբարձուքը պէտք է առնեն ուսումնարանի ամէն զրաղրութիւնները, սորա համար պիտի ունենան մի քարտուղար, որին կ'յանձնվի Ուսումնարանի ամէն զրաղրութեանց և նամակաց ելևմուտը գրելը և Հոգաբարձուների ամէն վճիռները արձանագրելը։

26. Հոգաբարձութիւնը պարտաւոր է կատարել ուսումնարանի գրավաճառութիւնը, որի համար ուսումնարանի ծախուց նախագաղափարը կազմվելուս յետ է դրվում մի անգամից մի որոշեալ գումար, որ դրանով ուսումնարանը ունենայ ամենայն ուսանելեաց պիտոյքները, և դասական գրեանքը, որոնք այս տեղ դժուար կը ճարվին։ Այս պիտոյքները կը վաճառվին աշակերտաց հարիւրին տասն օգուտով կանխիկ (նաղդ) վարձով։ Իսկ չքաւոր և որդեգիր աշակերտների համար նախագաղափար կազմվելուս մի գումար է նշանակվում, որով կը մատակարարվին նոցա ձրիաբար ամենայն ուսանելեաց պիտոյքները։

Ծանօթ. Այս յօդուածում որդեգիր կոչվածները են թէ ուսումնարանի և թէ բարերարաց որդեգիրքը, որոնք պարտաւոր են վերջումը վերադարձնել ուսումնարանի գրատանը բոլոր ստացած գրեանքը, բաց 'ի նախակրթական գրեանցից։

27. Հոգաբարձուքը, ըստ յաւելանալոյ ուսումնարանի նիւթական կարողութեանը, առաջարկումեն Տեսչին ընդարձակել ուսումն, յետոյ նորա տնօրէնութիւնը ներկայացնումեն Արեսփոխանական ժողովի հաստատութեանը։

28. Հոգաբարձութիւնը կարող է ըստ հաստատութեան Արեսփոխանական ժողովոյ և ըստ պահանջման հանգամանացն յաւելացնել թոշակատու աշակերտների վճարելի թոշակը։

29. Հոգաբարձուքը պարտաւոր են երբէք չպակասեցնել ուսումնարանի դրամագլուխը, իսկ եթէ պատահի ամենախիստ կարևորութիւն, պէտք է յայտնեն Արեսփոխանական ժողովին, որ համաձայնութեամբ հասարակութեանը կ'առնէ իւր տնօրէնութիւնները ոչ թէ դրամագլխից պակասեցնելով, այլ՝ գտնելով ուրիշ հնարներ։

30. Հոգաբարձուների ընտրութիւնը լինումէ ամէն երկու տարին մի անգամ քուէարկութեամբ Արեսփոխանական ժողովի։

Ծանօթ. Նոր ընտրութեան ժամանակ, հին Հոգաբարձուներից և կարելի է ընտրել, եթէ ընտրեալը օրինաւորապէս կատարած լինի իւր պաշտօնը և եթէ ինքը յօժարուի կրկին անգամ այս պաշտօնը յանձն առնուլ։

31. Ո՛չ ոք առանց օրինաւոր պատճառի, որ է տկարութիւն և բացակայութիւն, չունի իրաւունք հրաժարվելու Հոգաբարձական պաշտօնից։

32. Հոգաբարձուների բոլոր առաջարկութիւնքը վճռվում են բազմութեամբ ձայնից, որոց մէջ է և Տեսչի ձայնը։

33. Հոգաբարձուների հետ միասին ընտրվումեն քուէարկութեամբ և նոցա փոխանորդներ, որոնք Հոգաբարձուի բացակայութեան ժամանակ ըստ առաւելութեան իւրեանց քուէի ընդունում են իւրեանց վերայ Հոգաբարձուի իրաւունքը, պարտաւորութիւնները և պատասխանատուութիւնները։

ԳԱՆՁԱՊԵՏԻ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

34· Հոգաբարձուքը ընտրումն իւրեանց անդամակիցներից մի գանձապետ, յանձնելով նորան ուսումնարանի կնքով կնքված մի ժապաւինեալ հաշուեմատեան, որի մէջ նա ճշտութեամբ պէտք է գրէ ուսումնարանի եկեմտից հաշիւները։

35· Գանձապետը պէտք է ամիսը միանգամ հաշիւ տայ Հոգաբարձուներին, իսկ կէս տարին միանգամ պէտք է կազմէ այն անցեալ վեցամսեայ ուսումնարանի ել և մտից հաշիւները և Հոգաբարձուների հետ միասին ներկայացնէ Եպիսկոպոսական ժողովին։

36· Գանձապետը առանց Հոգաբարձուների թոյլտուութեան պէտք չէ դուրս տայ ոչինչ գումար։

37· Գանձապետի պարտաւորութիւնն է ժողովել թոշակատու աշակերտաց թոշակները, տալով նոցա ապահովագիր։ Թոշակը պէտք է ստացվի վեց ամիսը մի անգամ սկզբից, յունվարին և յուլիսին, անխտիր թէ երբ է եկել աշակերտը։

38· Գանձապետի պարտաւորութիւնն է վճարել վարժապետների ռոճիկը չորս ամիսը միանգամ սկզբից, կամ ինչպէս յարմար կը համարվի։

39· Գանձապետը պէտք է հոգայ, որ ուսումնարանի պաշտօնատէրների պիտոյքները (ճրագը և փայտը) պակաս չլինին *), հոգայ ուսումնարանի կահ ու կարասեաց բարեկարգութեան համար· միով

*) Վարժապետաց կացարանն է սուրբ Թովմայ առաքելոյ վանքումը, իսկ եթէ ոմանք չկամենան այն տեղ մնալ՝ իւրեանց հաշուովը կը վարձեն։

բանիւ Ուսումնարանին վերաբերեալ ամենայն տեսակ ծախքերը առնում Գանձապետը Հոգաբարձուների խորհրդակցութեամբ։

Ծանօթ· Այս հոգացողութիւնների պարտաւորութիւնը տարածվում է և միւս Հոգաբարձուների վերայ, բայց գլխաւորապէս գանձապետի վերայ, որի մտան է Ուսումնարանի դրամագլուխը և հաշիւները։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԵՐԱՑ։

40· Ուսումնարանումն ուսանելու են թոշակատու և ձրիավարժ աշակերտք։

41· Իւրաքանչիւր աշակերտի տարեկան վճարելի թոշակն է երեսուն մանէթ· իսկ եթէ Հոգաբարձուքը նկատեն որ և իցէ աշակերտի անկարողութիւնը այդ գումարը վճարելու, նոքա կարող են ստանալ նոցանից ըստ իւրեանց նկատողութեան, սակայն ոչ պակաս քան զտասն մանէթ, ստորագրել տալով վճարողին մտից մատենումը։

42· Ուսումնարանս կունենայ տասն և հինգ ձրիավարժ որդեգիրք այն ազքատների որդիներից, որոց չքաւորութեան մասին հաւատի են Հոգաբարձուքը, իսկ եթէ ուսումնարանը կունենայ կարողութիւն, կարող է և աւելի ևս ընդունել։ Այսպիսի աշակերտները կը կոչվին ուսումնարանի սեպհական որդեգիրք։

43· Քահանայից որդիքը կարող են ընդունվել ուսումնարանումը առանց թոշակի։

44· Ապագայումը, եթէ միջոցը ներէ, ուսումնարանի սեպհական որդեգիրներից արժանաւորները կարելի է ուղարկել ուսումնարանի ծախքովը ուրիշ բարձր ուսումնարաններ կատարելագործուելու այն նպատակաւ, որ նոքա վերջումը երեք տարի, տարեկան

երեք հարիւր մանեթով, կամ, եթէ հոդաբարձուքը արժան կը համարեն ևս աւելի ռոճկով, ծառայեն ուսումնարանումը, իսկ ՝ասարակութիւնը իւր կողմից պէտք է արձակէ ուղարկելի աշակերաը արքունական հարկից:

45· Որդեգիր աշակերաը կ'ընդունվի ուսումնարանումը ութ տարեկանից մինչև տասն և մի տարեկանը:

Նշանոթ· Այս յօդուածը այն երեխայից համար է, որոնք պիտի սկսեն ուսումը նախակրթարանից, իսկ՝ եթէ մէկը յարմար դատուի վերին դասատուները մանելու, նա կարող է լինել և հասակով մեծ:

46· Թէ ուսումնարանի և թէ բարերարաց որդեգիրքը առանց որ և իցէ կարևոր պատճառի, որ արժանի էր ՝ոդաբարձունների ուշադրութեանը, չունին իրաւունք թողնել ուսումնարանը, ուսման ընթացքը չաւարտած:

47· Որդեգիր աշակերաը եթէ ծուլութեան պատճառաւ չկարենայ փոխել դասատունը, դոնէ երկու տարին մի անգամ, կ'արտաքսվի և նորա տեղը կ'ընդունվի աւելի աշխատասէրը:

48· Ուսումնարանի բոլոր աշակերաքը ընդունվում են խնդրագրութեամբ ՝ոդաբարձունների անունով:

49· Բոլոր աշակերանները ուսման ժամանակը պէտք է ներկայ գտնվին ուսումնարանումը· եթէ ոչ, ծնողքը կամ ազգականքը պէտք է իմաց տան տեսչին պատճառը, որ պէտք է լինի օրինաւոր:

50· Ուսումից ազատ օրերը հետևեալքս են· ամենայն տէրունական օրերը, յունվարի մէկն, Նոնընդեան ութ օրը, բուն բարեկենդանի վերջին շաբաթը, փետրվարի տասնևչորսը, Լուսաւորչի մուտն 'ի վիրապն, ապրիլի չորսն և եօթն, Օատկի Աւագ հինգշաբաթից մինչև Նոր կիւրակէն, ՝ամբարձման օրը, Թադաւորի ծննդեան և Դահակալութեան օրերը, և ամառնային արձակուրդը քառասուն և հինգ օր, յուլիսի մեկից մինչև օգոստոսի տասն և հինգը:

51· Յունիս ամսի վերջերումը նշանակվում հրապարակական հարցաքննութիւն, ուր ներկայ են գտանվում ամենայն ցանկացողք:

52· ՝արցաքննութենից երկու օր յետոյ լինում տարեկան հանդէսը (ակտ), ուր ներկայ են գտնվում ամենայն ցանկացողք: Այս հանդիսի մէջ կարդվում ուսումնարանի տարեկան հաշիւը, յառաջադիմութիւնը և ընծայաբերաց անունքը, նոյնպէս և յատնվում աշակերտաց դասատուն փոխելը և բաժանվումն յառաջադէմ աշակերտներին պարգևներ: ՝անդիսից յետոյ աշակերտները արձակվումն մինչև օգոստոսի տասն և հինգը:

53· Ուսումնարանումս ընթացք աւարտող աշակերտները կ'ստանան վկայաթուղթ ՝ոդաբարձուաց և Տեսչի ստորագրութեամբ և ուսումնարանի կնքով դրոշմած:

ՏԵՍՈՒՉԸ ԵՒ ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ:

54· Ուսումնարանս կ'ունենայ մի տեսուչ ՝ոդաբարձունների ընտրութեամբ և Աբեսփոխանական ժողովի հաստատութեամբ:

55· Տեսչի պարտաւորութիւնն է հսկել ուսումնական մասի վերայ, վարժապետների ջանասիրութեան և աշակերտների յառաջադիմութեան վերայ, տալ եղանակ և ձև ուսուցանելու, ընդլայնել կամ փոք-

բացնել ուսման ընթացքը ըստ ժամանակին հանգամանաց։

56· Տեսուչը ընտրումէ և արձակումէ վարժապետները Հոգաբարձուների հաստատութեամբ, ընդունումէ աշակերտները ուսումնարան Հոգաբարձուների անունով տուած խնդրագրի զօրութեամբ։

Նշանաւոր· Կրօնի ուսուցիչը լինելով հոգևորական, ընտրվումէ Հոգաբարձուներից և հաստատվումէ Ուսումնարանիս բարձր հովանաւոր ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին։

57· Տեսուչն է անդամ Հոգաբարձութեան, նա ունի անմիջապէս յարաբերութիւն ուսումնական մասին վերաբերեալ խնդիրների մէջ Հոգաբարձութեան հետ, իսկ տնտեսական մասին նա միայն խորհուրդ է տալիս։

58· Տեսուչն է նշանակում վարժապետների և վերակացուների ռոճիկը Հոգաբարձուների խորհրդակցութեամբ։

59· Տեսուչն ընտրումէ երկու վերակացու վարժապետներից կամ օտարներից, ուսումնարանի մէջ կարգ պահպանելու համար, Հոգաբարձուների խորհրդով։

60· Տեսուչը կացուցանումէ վարժապետներից վարժապետական խորհուրդ որի նախագահը է ինքն։

61· Վարժապետական խորհրդի պարտաւորութիւնն է շաբաթը մի անգամ ժողով առնել քննելու դպրոցի ուսումնական մասի բարեկարգութեան վերայ, դասատուութեանց եղանակի, դասական մատեաններ ընտրելու, ուսանելի ժամերի կարգադրութեան և ուսումնական մասին վերաբերեալ ամենայն փոփոխութեանց վերայ, որի մէջն է և աշակերտաց դասատուները փոխելը։

62· Վարժապետական խորհուրդը պատրաստումէ աշակերտաց տարեկան յառաջադիմութեան հաշիւը և Հոգաբարձութեան հաշուի հետ Եբրեփոխանական ժողովին և հասարակութեանը ներկայացնելուց յետոյ՝ ներկայացնումէ ուսումնարանիս բարձր Հովանաւոր ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսին։

ԿԱՐԳ ՈՒՍՄԱՆ ԵՒ ՈՒՍԱՆԵԼԻ ԱՌԱՐԿԱՅՔ։

63· Որովհետև ուսումնարանիս խորհուրդն է Հասարակութեան օգտաւէտ անդամներ յառաջ բերել և Հայոց եկեղեցուն ընտիր պաշտօնեաներ պատրաստել, պէտք է ոչ միայն զարգացնել նորանց գիտութեան մէջ, այլ և կրթել բարոյականութեան վեմ կանոնների մէջ։ Մանուկների բարոյականութիւնը կարելի է կրթել սէր ձգելով նոցա մէջ դէպ 'ի ամենայն օգտաւէտ աշխատասիրութիւն, դէպ 'ի ընթերցասիրութիւն այնպիսի գրուածների, ուստի կարելի էր քաղել սնունդ մտաւոր և բարոյական։

64· Մանուկների բարոյականութիւնը կրթելու համար պէտք է պատուել նոցա մարդկային արժանաւորութիւնը, յարգել նոցա իրաւունքը իբրև քաղաքացիք ապագայ ազգային հասարակութեան, ուստի պէտք է ըստ կարելութեան աշակերտներից հեռացնել ամենայն մարմնական պատիժ։

65· Ուսումնարանիս դասատուութեան առարկայքը հետևեալքս են· Քրիստոնէական վարդապետութիւն ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ և առաքելական եկեղեցւոյ· Սրբազան պատմութիւն· Պատմութիւն հայկազեան եկե-

ղեցու. Եկեղեցական երգեցողութիւն. Հայոց լեզու. Հայոց պատմութիւն հանդերձ Հայաստանի աշխարհագրութեամբ. Ռուսաց լեզու. Գաղղիացւոց լեզու. Թուաբանութիւն. ընդհանուր պատմութիւն. ընդհանուր աշխարհագրութիւն. Տօմարագիտութիւն. Այլեւագրութիւն և Բնական պատմութիւն:

66. Այս առարկայքը պէտք է ուսուցանել մի նախակրթարանի և երեք դասատան մէջ:

67. Նախակրթարանում քանի որ երեխայքը փոքր են և սկզբնական կրթութիւնը պէտք է այս տեղ սկսեն, կը մնան անորոշ ժամանակ, մինչև նոցա կրթութիւնը ներէ մտանել առաջին դասատուն, իսկ միւս դասատուններում պիտի է մնան երկու երկու տարի:

68. Նախակրթարանի ուսանելի առարկայքը սոքա են՝

ա. Պարզ կարդալ, գրել և հասկանալ աշխարհաբառը և թեթև գրաբառը:

բ. Սրբազան պատմութենից՝ Յիսուսի բոլոր տնօրէնութիւնները:

գ. Պարզանալ գրել կարճ պարբերութիւններից կազմուած աշխարհաբառ լեզուով թեթև շարադրութիւններ:

դ. Ռուսաց լեզուից՝ վարժ կարդալ, գրել և հասկանալ մանր և հեշտ պարբերութիւններ:

ե. Թուաբանութեան չորս կանոնները:

69. Առաջին դասատան առարկայքը սոքա են՝

ա. Հայոց քերականութեան առաջին մասը հանդերձ ընթերցանութեամբ ընտիր մատենագրաց:

բ. Շարադրութիւն աշխարհաբառ լեզուով:

գ. Սրբազան պատմութենից՝ Հին Պատկարանը մինչև վերջ:

դ. Հայոց պատմութիւն մինչև Արշակունեաց թագաւորութեան վերջը:

ե. Ռուսաց քերականութեան առաջին մասը հանդերձ ընթերցանութեամբ ընտիր հեղինակաց:

զ. Հեշտ շարադրութիւններ Ռուսաց լեզուով:

է. Գաղղիացւոց լեզուից՝ վարժ գրել, կարդալ և հասկանալ մանր և հեշտ պարբերութիւններ:

ը. Ընդհանուր պատմութեան Հին դարը:

թ. Թուաբանութենից մինչև կոտորակները:

ժ. Քաղաքական աշխարհագրութիւն:

70. Երկրորդ դասատան ուսանելի առարկայքը սոքա են՝

ա. Հայոց քերականութիւնը մինչև վերջը հանդերձ շարադրութեամբ և ընթերցանութեամբ երևելի մատենագրաց:

բ. Քրիստոնէական վարդապետութիւն:

Ծանօթ. Ամենայն դասատուններից կը ժողովուին ձայնաւոր աշակերտները և շաբաթը երկու անգամ կ'ուսանին նոքա Եկեղեցական երգեցողութիւն, իսկ եթէ միւս աշակերտներից ևս ցանկացող կը լինի, նոքա ևս կ'ուսանին:

գ. Հայոց պատմութիւն մինչև վերջը:

դ. Ռուսաց լեզուից՝ Քերականութիւնը մինչև վերջը հանդերձ շարադրութեամբ և ընթերցանութեամբ երևելի հեղինակաց:

ե. Ընդհանուր պատմութիւն, միջին դարը:

զ. Բնական և Ուսումնական աշխարհագրութիւն:

է. Բնական պատմութենից՝ կենդանաբանութիւն:

ը. Թուաբանութիւն մինչև վերջը:

Թ. Գաղղերէն Վերականութիւն և Թարգմանութիւն։

71. Երրորդ դասատան ուսանելի առարկայքը սոքա են՝

ա. Պատմութիւն Հայոց զրականութեան հանդերձ շարադրութեամբ և ընթերցանութեամբ երևելի մատենագրաց։

բ. Եկեղեցական պատմութիւն Հայոց։

գ. Պատմութիւն Ռուսաց զրականութեան հանդերձ շարադրութեամբ և ընթերցանութեամբ երևելի հեղինակաց։

դ. Ընդհանուր պատմութեան նոր դարը։

ե. Տօմարագիտութիւն և կարևոր տեղեկութիւններ վաճառականութեան վերայ։

զ. Ընդհանուր հայեցուածք Հայոց պատմութեան վերայ։

է. Գաղղերէնից՝ ազատ թարգմանութիւն հանդերձ շարադրութեամբ և ընթերցանութեամբ երևելի մատենագրաց։

ը. Բնական պատմութենից՝ Տնկաբանութիւն և Հանքաբանութիւն։

72. Այս կանոնադրութիւնը ըստ ժամանակին հանգամանաց կարող է նորոգվել և առաջարկվել Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեանը։

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԵՑՈՅ ՀԱՅԿԱՆՈՒՀԵՆ ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ։

---

1. Վերին Ագուլեաց Հայ տիկնայքը զգալով լուսաւորութեան և ժամանակի ստիպեցուցիչ պիտոյքը, ցաւելով օրիորդաց այժմեան տրտում վիճակի վերայ և առ'ի սրտէ ցանկալով, որ նոքա լինին ապագայումը զերդաստանների արժանաւոր և ճշմարիտ մայրեր, որոնցից կախուած է ազգի յառաջադիմութիւնը և երջանկութիւնը, հաստատումն Ագուլիսում օրիորդաց ուսումնարան Հայ աղջկանց համար։

2. Ուսումնարանս կոչվում է Վերին Ագուլեաց Հայկանուշեան օրիորդաց ուսումնարան։

3. Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանը հաստատվում է ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսից և դանվում է նորին վեհափառութեան անմիջապէս բարձր հովանաւորութեան ներքոյ։

4. Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանը հաստատուած է երթևեկ աշակերտուհեաց համար։

5. Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի խորհուրդն է պատրաստել կրթեալ կանայք, որոնք կարողանան վարժապետուհիներ դառնալ և վերջումը լուսաւոր մայրեր լինել և դաստիարակել իւրեանց որդիքը քրիստոնէական կրօնի և բարոյականութեան կանոնների մէջ։

6· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի դասատուութեան առարկայքը պիտի լինին Հայերեն։

7· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանը պէտք է կախումն ունենայ Վերին Աղուլեաց հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուներից, Կառավարչական մասնում։

8· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանը պէտք է ունենայ իւր առանձին կնիքը։

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՀԻՔ։

9· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի Հոգաբարձուհեաց թիւը չէ սահմանուած։

10· Հոգաբարձուհի լինելու համար վճարվում է տարեկան վեց մանէթ։

11· Հոգաբարձուհիք պարտաւոր են յաճախ այցելութիւն առնել Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանին և խրախուսել աշակերտուհիքը։

12· Հոգաբարձուհիք պարտաւոր են զոնէ երկու շաբաթը միանգամ ժողովել ուսումնարան և խորհել ուսումնարանի յարատևութեան մասին։

13· Հոգաբարձուհիք ընտրումեն իւրեանց միջից մէկին ուսումնարանի տեսչութեան պաշտօնը կատարելու և յանձնումեն նրան ուսումնարանի բոլոր կառավարութիւնը, որ նա անմիջապէս հաղորդակցութիւն ունենայ Վերին Աղուլեաց հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուների հետ, կառավարչութեան մասնումը։

14· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի Հոգաբարձուքը ընտրումեն իւրեանց միջից մէկին օգնական տեսչուհոյ։

15· Տեսչուհին նշանակումէ վերակացուհիներ աշակերտուհեաց վերայ հսկելու։

16· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի Տեսչուհին պարտաւոր է հսկել դասատուութեանց վերայ։

17· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանը պահպանելու նոյնպէս և ուսումն ընդարձակելու համար, ընդունվումեն ընծայաբերութիւնք ընդհանուր ազգից։

18· Ընդունվումէ և բարերար անձներից որդեգրական ընծայաբերութիւն վասն պահպանելու աղքատ աշակերտուհիներ, որոնք և կ'կոչվին որդեգիրք ընծայաբերող անձին։

19· Որդեգիր պահելու համար նուիրվումէ միանգամից չորս հարիւր մանէթ, որի տոկոսեօքը պէտք է պահվի ուսումնարանումն մշանջենաւոր մի որդեգիր։

20· Ընդունվումեն և թոշակատու աշակերտուհիներ, որոց տարեկան վճարելի թոշակն է քսան մանէթ։

21· Եթէ հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուհիքը նկատեն որ և իցէ աշակերտուհոյ անկարողութիւն այս գումարը վճարելու, նոքա կարող են ընդունել նորան և ըստ իւրեանց բարեսեսութեան և Տեսչուհոյ խորհրդակցութեամբ։

22· Ուսումնարանի մէջ կ'ընդունվին և ձրիավարժ աշակերտուհիք, որոնք ևս կ'կոչվին որդեգիրք ուսումնարանի։

23· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանին արած ընծայաբերութիւնքը արձանագրելու համար, հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուքը տալիս են Տեսչուհոյն մի ժապաւինեալ հաշուեմատեան։

24· Հոգևոր ուսումնարանի Հոգաբարձութիւնը նշանակումէ անդամներից մեկին գանձապետ Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանին, տալով նորան մի ժապաւինեալ մատեան ուսումնարանի եկ և մուտքը գրելու համար:

25· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի գանձապետը Տեսչուհւոյ առաջարկութեամբ և հոգևոր ուսումնարանի Հոգաբարձութեան խորհրդովը առնումէ ուսումնարանի բոլոր ծախսերը:

26· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի և բարերարաց որդեզրաց դասական մատեանները և այլ ուսումնարանական պիտոյքը ստանումեն հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուքը 'ի հաշիւ օրիորդաց ուսումնարանի:

27· Թոշակաւոր աշակերտուհեաց դասական զրեանքը և այլ ուսումնական պիտոյքը հայթայթումեն աշակերտուհեաց ծնողքը և խնամակալքը:

28· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանին աշակերտուհի յանձնողքը պէտք է զրով խնդրամատոյց լինին առ Տեսչուհին, որ ընդունելով թոշակը յանձնումէ գանձապետին:

29· Թոշակն տրվումէ տարին երկու անդամ, յունվար և յուլիս ամիսների սկզբից, թէպէտ և աշակերտուհին ընդունվումէր յետոյ:

30· Տեսչուհին արձակումէ վերակացուհի, վարժապետներ և աշակերտուհիք հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուների խորհրդակցութեամբ:

31· Տեսչուհին կարգումէ տարեկան հրապարակական հարցաքննութիւն, ուր ներկայ են լինում բոլոր Հոգաբարձուհիք, հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուքը, և այլ ամենայն ցանկացողք, պարգևատրումէ յառաջադէմ աշակերտուհիներին, երկու օրից յետոյ տարեկան հանդիսի մէջ տալիս է ուսումնարանի նիւթական հնարների և ուսումնական մասի լիակատար համարը, և ապա ներկայացնումէ այն համարը Նորին Վեհափառութեանը:

Ծանօթ. Նիւթական հնարների որպիսութեան համարը նա ստանումէ Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի Գանձապետից, իսկ՝ Ուսումնականը՝ Հոգևոր Ուսումնարանի Տեսչից:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍԸ:

32· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանը գտանվումէ ըստ ուսումնական մասին հոգևոր ուսումնարանի Տեսչի հսկողութեան ներքոյ:

33· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի դասատուութեան համար հոգևոր ուսումնարանի Տեսուչը Տեսչուհւոյ խորհրդակցութեամբ կարգումէ վարժապետներ հոգևոր ուսումնարանի ուսուցիչներից:

34· Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանի առարկայքը սոքա են· Քրիստոնէական Վարդապետութիւն, Սրբազան Պատմութիւն, Հայոց լեզու, Հայոց Պատմութիւն, Ռուսաց լեզու, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Ձեռագործութիւն, Վայելչագրութիւն, Նկարչութիւն և Երգեցողութիւն:

35· Այս առարկաները պէտք է աւանդվին մէկ նախակրթարանի և մէկ դասատան մէջ:

36· Որովհետև Հայկանուշեան օրիորդաց ուսումնարանը ամենայն մասամբ ստորադրուած է հոգևոր ուսումնարանի Հոգաբարձուների իշխանութեանը,

այս կանոնադրութեան պակասութիւնքը լցվումեն հոգևոր ուսումնարանի կանոնադրութեան սրան վերաբերեալ բոլոր յօդուածներովը։

Այս միջոցումը զրվեցան արանց և կանանց կողմից խնդիրներ առ Վեհափառ Կաթուղիկոսը, ստորագրվեցան, և ընտրվեցաւ պատգամաւոր Էջմիածին գնալու Պարոն Գրիգոր Տէր Մկրտչեանցը։

ԱՀԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԸ։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵՆ

ՏԵՐՈՆ ՏԵՐՈՆ ԳԻՐԳՈՐԵՑ ԱՍՏՈՒԱԾՕՐԵՆՏԻՐ, ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԵՆԵՑՆ ՀԱՅՈՑ,

Ի Հայաստանի հասարակութենէ Վերին Ագուլեաց Խոնարհական խնդիր։

Յառաջադէմ ազգաց փորձը և լուսաւոր դարուս ոգին քաջ համոզած են մեզ՝ որ մի ազգի շինութեան և կենդանութեան գլխաւոր տարրը իւր բարոյական զօրութիւնն է, իսկ այս զօրութիւնն է ծնունդ դաստիարակութեան։ Ամեն ուսումնասիրաւ ժողովրդոց արդէն զգալի է այս ճշմարտութիւնը, մանաւանդ մեզ Վերին Ագուլիսեցւոցս համար։ Մեր Ագուլիսը, Վեհափառ Տէր, այս 'ի նախնեաց հռչակուած Գողթան բարեբեր գաւառը, սկսեալ Հայաստանի տխուր անիշխանութեան ժամանակից, օտար ազդեցութեանց ենթարկուելով կորցրել է ոչ միայն իւր նախնական շքեղութիւնը, այլ և նոյն շքեղութեան հետ միասին իւր մայրենի լեզուն, որ հայ ազգայնութեան խորհրդական անօթն է և ազգային զարգացման գլխաւոր միջնորդը։ Այս ցաւը զգալի է այսօր ոչ միայն մեզ Ագուլեաց բնակչաց, այլ և բոլոր հեռաբնակ ազգայնոց, որոց համար անշուշտ անմոռանալի է մեծահամբաւ Գողթանը, որ երբեմն օրօրան դարձած էր ազգային լեզուի վիպասանական ճոխութեան։ Զգուշանք մենք, Վեհափառ Տէր, որ անկրթութենէ և անուսումնութենէ նսեմացած ազգայնութիւնը ուսմամբ և դաստիարակութեամբ միայն կարէ վերականգնիլ, ուստի և ցանկալով ստորագրութիւն բանալ և ըստ չափու կարողութեան դրամական նուիրաբերութիւններ առնել, յատկապէս խնդրումենք Ձեր Վեհափառութենէն, որ Դուք ևս Ձեր կողմէն հայրաբար բարեհաճիք մեր հետևեալ ազգօգուտ առաջարկութիւնները կատարելու. նախ՝ Հայրապետական Կոնդակաւ իրաւունք տալ մեզ բանալ օրինաւոր դպրոց մեր Վերին Ագուլիսի մէջ սրբոյն Թովմայի Առաքելոյ վանքումը, որ այդ շնորհը արել է մեզ Ձեր երջանկայիշատակ Նախորդը՝ Տէր Ներսէս Ե. Կաթուղիկոսն Աշտարակեցի 26 ին օգոստոսի 1850 ամի, համարաւ 277։ Եւ երկրորդ՝ հաստատելով մեր գրած կանոնները այն ուսումնարանի մասին, հրաման տալ մեզ հաստատել հոգաբարձական խորհուրդ, և համաձայն ժողովրդոց հաւանութեամբ ընտրել անձնադիր Հոգաբարձուք դպրոցի ելևմտական կամ տնտեսական արդեանց, ծախուց և ուսումնական բարեկարգութեան վերայ հսկելու և տեսուչ ու վարժապետներ ընտրելու։

Հարկ ենք համարում ասել ընդ սմին, Վեհափառ Տէր, որ դպրոցը կը լինի անընդմիջապէս Ձեր Հայրապետական հովանաւորութեան ներքոյ և ընտրուած Հոգաբարձուքը պարտաւորուած կը լինին իւրաքանչիւր տարի հաշիւ տալ իւրեանց ամենակերպ ուսումնարանական գործողութեանց մասին, նախ՝ ընտրող ժողովրդին և ապա նոյն տարեկան հաշիւն մատուցանել 'ի նկատողութիւն Վեհափառութեան Ձերոյ։

Այս մի փառք է, Վեհափառ Տէր, մեր համար, որ շապաւմենք մեք առաջին անգամը արժանի լինել Ձեր Սուրբ Հայրապետական Կոնդակին, նոյն իսկ Ձեր Սուրբ Լուսաւորչի Գահը բարձրանալու օրը, Կոնդակին, որոյ նպատակն է ազգային լուսաւորութիւն տարածելը։ Այս իրողութիւնը պարծանք պիտի լինի Գողթան դաւառի Հայերիս և խրախոյս մեր միւս եղբարցն ևս այսպիսի բարենպատակ ձեռնարկութեանց մէջ, քանի որ Ձեր Հայրապետական իշխանութիւնը ինքնին ժողովրդի լուսաւորութեան և բարօրութեան համար մտածող և խնամակալ իշխանութիւն է։

Դրաջայոյս ենք, Խնամակալ Հայր, որ սիրալիր ընդունելութեամբ պիտի կատարէք Ձեր որդւոց շահաւէտ խնդրուածքը և նոյն իսկ մեր յարգելի պատգամաւորաց ձեռքովը պիտի արժանի առնէք Ձեր օրհնալիր հաստատութեան Կոնդակին։

Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ որդիք

(Պորտքրոնիոնց)։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵՍՆ

ՏԵՌՈՆ ՏԵՌՈՆ ԳԻԼՈՐԳԵՑ ԱՍՏՈՒԱԾՕՐԸՆՏԻՐ, ՍՐՈՒԱՋՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԵՑՆ ՀԱՅՈՑ։

Վերին Ագուլեաց Հայ Կանանցից
Ամենախոնարհ խնդիր։

Բաղմադարեան փորձերը և ներկայիս ուրիշ յառաջադէմ ազգաց օրինակը մեր առաջև նկարագրեցին մեր պարտականութիւնը, որ ունինք կատարելու մեր մանկանց մատաղ միտքը դաստիարակելու։ այս պարտականութիւնը մեզ զգալի եղաւ, ճանաչեցինք մեր ծանր պատասխանատուութիւնը Աստուծոյ և մեր երեխայից ապագայի առաջ, հաստատ իմացանք, որ մինչև մեր սեռը չդաստիարակուի կրօնի և ազգութեան սկզբունքներում, չէ կարող լինել իսկապէս մայր, որից կախեալ է ազգի յառաջադիմութիւնը։

Եւ քանզի միջոցը և մեր յարգելի այր մարդիկը ոչ միայն ներում են մեզ, այլև՝ ուրախութեամբ կամակից են դառնում այս մեր ազգաշէն գործումը, իրենք ևս զգալով՝ թէ առանց կանանց սեռի կրթութեանը ոչինչ նշանակութիւն չունի արական սեռի դաստիարակութիւնը, մեք վստահութիւն ենք առնում իւրաքանչիւրս մեր կողմից չինայել ըստ մեր կարողութեան ձեռնտու լինիլ այս բարի նպատակը յառաջ տանելու համար։ և այս վստահութեամբը դիմումենք Ձերդ Վեհափառութեանը, ներկայացնելով խնդիր և կանոնագրութիւն մի օրիորդաց ու-

սուլթանաբան բանալու համար մեր Վերին - Աղուլիսում ,, Հայկանոց-ղեան ‘‘ անունով :

Յոյս մեծ ունինք, թէ Ձեր Վեհափառութիւնը քաղցր ակնարկութեամբ կը կատարէք մեր խնդիրը, արժանի կանէք Ձեր հայրական, սուրբ և աւետաբեր Կոնդակին և համաձայն ուսումնարանի կանոնադրութեանը անտես չէք առնելու ընդունել Ձեր վերայ ուսումնարանի բարձր հովանաւորութիւնը: Այս կը համարենք մեզ փառք և Ձեր անունը անքակտելի կը միացնենք մեր Գողթան Գաւառի լուսաւորութեան հետ:

Ձերդ Վեհափառութեան ամենախոնարհ դատերք
(Սարգիս-Ենի-ան):

Իմ ճանապարհորդութիւնս զոհվեցաւ Աղուլեաց օգտին և ժողովրդի խնդրանքը, անպատճառ մասնակից լինելու ինձ այս գործի սկզբնաւորութեան մէջ, փոխվեցաւ նոյնպէս դէպ 'ի Էջմիածին իբրև գործակից Պարոն Արիստափորին:

Վեհափառ Հայրապետը ազգասիրական և ուսումնասիրական հոգւով, տեսնելով Աղուլեաց առաջարկութիւնը, ուրախացաւ, հայրաբար օրհնեց Աղուլեցի արանց և կանանց ձեռնարկութիւնը և նոյն իսկ իրեն օծման օրը չնայելով այնպիսի խառը միջոցին անձամբ ընթերցաւ կանոնադրութիւնը և խոստացաւ երկու օրից յետ անպատճառ պարգևել Աղուլիսի համար ամենացանկալի բացման կոնդակները, որ և կատարեց իսկ՝ պահելով իւր մօտ կանոնադրութիւնքը և խոստանալով կարճ միջոցում հաս-

տատելիք ընդհանուր ուսումնարանական կանոնադրութեանը տալ Աղուլեցւոց:

ԱՀԱ ԿՈՆԴԱԿՆԵՐԸ:

Գէորգ Ծառայ Արիստոսի և անհաւատելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

Արիստոսասէր Հայասարակութեան, որդւոց մերոց սիրելեաց՝ որ 'ի Վերին Աղուլիս, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Օմիաբանականն Ձեր խնդիր յաղագս ընդունելոյ ընդ մերովս հովանաւորութեամբ զՀոգևոր ուսումնարան Վերին Աղուլեաց, զոր հանդերձեալ էք բանալ 'ի վանս Սրբոյն Թովմայի Առաքելոյ 'ի դաստիարակութիւն մանկտւոյն 'ի հրահանգս կրօնական և արտաքին ուսմանց ախորժ հաճութեամբ ընթերցեալ՝ փառս տուաք Աստուծոյ և գովութիւն յոյժ Ձեր բումդ Աստուածահաճոյ և ուսումնատենչ ջանասիրութեան և նուիրատուութեան: Եւ ահա փութամբ յայտ առնել Արիստոսասէր որդւոցդ՝ զի և մերոցս ըղձից և դիտմանց համաձայն զձերդ գտանելով զառաջարկութիւն ըստ գեղեցիկ նպատակին, սովին կոնդակաւս ընդունիմք զուսումնարանն զայն ընդ Մերովս Գերագոյն Վերատեսչութեամբ. վասն որոյ և տամք ձեզ հրաման հոգալոյ այժմէն զհանդերձանս բացման ուսումնարանին այնորիկ, պատրաստելով և առաջարկելով մեզ 'ի հաստատութիւն զՀոգաբարձուս և զՑեսուչ և զԱրժապետս նորին:

Իսկ յաղագս նախագծին կանոնաց այնր ուսումնարանի ծանուցանեմք Հասարակութեանդ պատուականի, զի մեր արդէն փոյթ 'ի մտի եղեալ է տալ յօրինել զՀանրական ինչ կարգադրութիւն վասն տեսչութեան ամենայն հոգևոր Ազգային ուսումնարանաց կողմանցս, յորոց սակի է և առաջադրեալդ առ 'ի ձէնջ՝ իբրև ուսումնարան երկրորդ կամ միջին կարգի. և զայս կանոնադրութիւն առաքեսցուք առ ձեզ յետ սակաւ ժամանակի յանվրէպ և յանխափան գործադրութիւն 'ի փառս Տեառն և յօգուտ Ազգիս, և 'ի պայծառութիւն առանձինն արժանաւոր սերնդոցդ գերահռչակ Դաւառիդ Դողթնեաց, որոց և մաղթեմ ողջ լինել 'ի Քրիստոս և յաւելուլ յեռանդն Աստուածասիրութեան և ուսումնասիրութեան:

Գէորգ Դ. Կաթողիկոս ամենայն Հայոց:

Ցամի ազգային թիւ ՌՁԺԺ 25 Մայիսի
և Փրկչական 1867
'Ի Սուրբ Աթոռն Էջմիածին:
Համար 101:

Գէորգ Ծառայ Քրիստոսի և անհատանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական նախամեծար աթոռոյ Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի.

Քրիստոսասէր և բարեպաշտ տիկնայցդ Հայոց, որ 'ի վերինն Ազուլիս, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Անծաւ զոհութեամբ և բերկրութեամբ սրտի ընթերցաք զնդիր Ձեր յաղագս ընդունելոյ ընդ մեր

բովս հովանաւորութեամբ զուսումնարանն օրիորդաց, զոր զովելի եռանդեամբ լուսաւոր աստուածպաշտութեան և ուսումնասիրութեան յօժարեալ էք բանալ 'ի քաղաքիդ: Մտադիր սիրով կատարեմք աւասիկ զնդիր Ձեր այսու կոնդակաւս, և տամք ձեզ հրաման փոյթ ընդ փոյթ պատրաստել և առաջի առնել մեզ 'ի հաստատութիւն զՏեսուչ և զԱրժապետուհիս ուսումնարանիս, և մեք առաքեսցուք առ Ձեզ ընդ հուպ զՀանրականն կանոնադրութիւն այդպիսեաց օրիորդական դպրոցաց, զի ըստ այնմ ձիռնարկեալ և յառաջ վարիցէք զգործդ մեծ և կարևոր, արդարև ազգաշահ, և աստուածահաճոյ օրհնութեամբ Բարձրելոյն և Մերովս աննիւաղ և սրտեռանդն խնամակալութեամբ:

Գէորգ Դ. Կաթողիկոս ամենայն Հայոց:

Ցամի Ազգային ՌՁԺԺ 25 Մայիսի
և Փրկչականն 1867
'Ի Սուրբ Աթոռն Էջմիածին:
Համար 102:

Ո՜հ, ինչքան մեծ եղաւ Ազուլեցւոց ուրախութիւնը, երբ ստացան այս աւետիքը, ի՞նչ անհամբերութեամբ էին սպասում նոքա առաջիկայ շաբաթ երեկոյին, երբ պիտի կարդացվէին եկեղեցումը այս բերկրալից կոնդակները. ի՞նչ մեծ ներգործութիւն և տպաւորութիւն արեց բոլորի վերայ սուրբ Թովմայի վանքի վանահայր վարդապետը իւր ձեռքին խորանից բարձրացրած եկեղեցական զարդերի հետևողութեամբ կոնդակները և դէպի սեղանը բարձրանալով: Ա՛երջապէս ամենքը լսեցին սեղանի վրայից վարդապետի

ընթերցանութեամբ այս աւետալի լուրը, և Տէր Մեսրովը քահանայի ասած պատշաճաւոր քարոզը այս հանդիսի մէջ, օրհնելով Վեհափառի կեանքը, և աւելի հոգի ու քաջալերութիւն ստացան ձեռնտու և օգնական լինել ազգային օրիորդների դպրոցի յաջողութեանը: Հոգաբարձուների առաջին գործը եղաւ այնուհետև սուրբ Թովմայ Առաքելոյ վանքումը սկսանել ուսումնարանական տուների և վարժապետաց կացարանների շինութիւն, հինգ դասարանք և հինգ վարժապետական օթեւանք. այս գործի մէջ առաջնորդ առան իւրեանց երջանկայիշատակ Ներսէս Ե. աշտարակեցի Պաթողիկոսի կոնդակը: Հաշիւ տեսնուեցաւ, մօտ 4000 մանեթ ծախքի կարօտ էին այդ շինուածքը, բայց այդ մեծ գումարը խափան չեղաւ կարևոր գործի յառաջտարութեանը:

Յուլիսի սկզբին ես հոգաբարձուների կարգադրութեամբ պատրաստվուեցայ գնալ ուսուցիչներ հրաւիրելու *): Մի..... երևոյթ պղտորեց խեղճ ժողովրդի երևակայութիւնը, բայց վերջը ստութիւնը պարտուեցաւ: Զարմանք չէր այս, թէ 1864 թուին ևս սրանից աւել զգալի էր ,,թող 40 տարի յետ մնան Հայերը **)'' ասողի գործ դրած անհաւատարմութիւնը առ իւր ուսուցիչը, որի համար իւր կեանքն էր խոստանում զոհել:

*) Ոչ այնքան Ադուլեայ ժողովրդի իրաւացի խնդիրը ինձանից իբրև ազգի անդամ և պարտական սպասաւորելու ազգին ըստ իմ կարողութեան, որչափ եռանդուն ազգասիրութիւնը ստիպեց փոխել նպատակս, և ես յանձն առայ մնալ Ադուլիսում ուսուցչական պաշտօնով:

**) Տես Մեղու Հայաստանի:

Թէպէտ նորա կործանումը մեծ եղաւ, բայց սերմանած որոմը աճեց և աւերեց անխոնջ մշակի աշխատութիւնը, իսկ վերջինս դեռ չբուսած՝ չորացաւ, և ես ուղարկվեցայ ինձ նշանակեալ պաշտօնը կատարելու:

Յաջողութեամբ դատնելով մի քանի եռանդուն և արիաջան ուսուցիչներ, խնդրեցի նոցանից սեպտեմբերին Ադուլիս դատնուիլ: Մի ամիս բացակայութենից յետոյ վերադառնալով, գտի ես ուսումնարանի շինութիւնքը աւարտման վերայ և դասարանների բոլոր պիտոյքը պատրաստուած:

Բացուեցաւ ուսումնարանը. այս տեղ հասան և ուսուցիչներից երկուքը և ուսումն սկսաւ: Ուսումնարանն լցվեցաւ աշակերտներով, մի շաբաթի մէջ 100 աշակերտք ժողովուեցան, բայց աղջկանց ուսումնարանի բացումը դեռ մնում էր Թավրիզից հրաւիրուած վերակացուհոյ գալստեանը: Երբ որ վերակացուհին ժամանած էր, ժողովուրդը ինքը խնդրեց հոգաբարձուներից շուտով բանալ և օրիորդաց դպրոցը:

Նշանակվեցաւ այս հանդիսի համար հոկտեմբերի 26ը Ադուլեաց սուրբ Գրիգորիս անունով եկեղեցւոյ տօնահանդեսի օրին, երբ համաձայն տեղական սովորութեան պիտի ժողովուէին բոլոր Ադուլեցիք, և ուր պիտի լինէր աղջկանց ուսումնարանը:

Հոկտեմբերի 26 ին ժողովուրդը հաւաքուեցաւ, ոչ թէ որպէս սովոր էր, սուրբ Գրիգորիսի, այլ սուրբ Թովմա առաքելոյ վանքում, կամենալով տղայոց ուսումնարանի բացման հանդէսն միացնել աղջկանցի հետ: Այս տեղ էր տղայոց ուսումնարանը:

Տասը ժամին աշակերտք և աշակերտուհիք շրջապատած լսումէին հոգևոր ուսումնարանի բարերաբաց հոգեհանդիսաը և իւրեանց մանկական արդար բերանով օրհնումէին իւրեանց հայրերը և այս ուսումնարանի հիմնողքը։ Հոգեհանդստից յետոյ հանդէսը խաչով, աւետարանով և ամենայն եկեղեցական զարդով յառաջ գնաց դէպ 'ի տղայոց ուսումնարանը, ուր ,,Այսօր երկնայինք'' շարականով, սկսաւ օրհնութիւնը. և ,,Թոյլ տուք մանկտոյդ գալ առիս'' խօսքը Յիսուսի Քրիստոսի քաջալերութիւն տուեց յառաջադէմ աշակերտներից մեկին, Ստեփան Սաֆրազեանցին կարդալ իւր ընկերների կողմից այս ճառս։

ՀԱՅՐԵՐ։

Այսօրեան հանդէսը մեր կեանքի համար նշանաւոր է և մեծ պարտականութիւն է դնում մեր վերայ. այսօր դուք եկել էք ուրախ սրտով անմոռաց առնել ձեր երախտիքը ձեր որդիներին. դուք այսօր բանալով մեր դաստիարակութեան համար ուսումնարան, մի քաղցր հարկ էք դնում մեր վերայ աշխատել մեր կողմից ժրաջան ուսմամբ և բարի վարքով թէ ձեր աշխատանքը պսակել և թէ ապագայումը պիտանի զաւակներ լինել մեր սիրելի հայրենիքին։

Մեք երջանիկ ենք, որ արժանացել ենք, թէ ձեր նման որդեսէր և ազգասէր ծնողներ ունենալ, և թէ այսպիսի բարի և բանիմաց ուսուցիչների պատահիլ, որոնք կարող են մեզ առաջնորդել դէպ 'ի լոյս գիտութեան և ճշմարտութեան։ Դուք, մեր յարգելի ծնողք, շատ լաւ էք հասկացել, թէ առանց մեր երկու սեռի կրթութեանը, շատ փոքր արդիւնաւոր պիտի լինէր ազգային դաստիարակութիւնը. դուք այսօր բացումէք և մեր քոյրերի համար լուսաւորութեան տուն, այսօր մեր ուրախութեանը չափ չկայ։

Մեք Հայոց պատմութեան մէջ ուսած ենք, որ մեր Գողթան գաւառը յառաջուց նշանաւոր է եղել իւր հանճարաւոր բանաստեղծներով, բայց տգիտութիւնը, ժամանակը և պարսիկների բռնակալութիւնը մեռցրել են մեր նախնեաց մէջ այս քանքարը։

Այժմ, մեր հայրեր, դուք ձեր այսօրեան բարի գործովը կամենումէք վերականգնել մեր նախնեաց երևելի ձիրքը ձեր մանուկներիս մէջ, այդ մեծ պարծանք է ձեր համար. թէ մեք և թէ մեր ապագայ սերունդը, երբ կը վերահուչակվի իւր շնորհներովը, կ'օրհնէ և կը փառաբանէ ձեր անունը։

Ողջ կացէք, մեր ծնողք, ձեր որդիներս խոստանումենք անպտուղ չթողուլ ձեր ջանքը, խոստանումենք բարի և խելացի պատանիներ դուրս գալ և վերջումը պիտանի զաւակներ լինիլ հայկական ազգին։

Ստեփանոս Սաֆրազեանց։

Ներքին Ազուլեաց ուսումնարանի արիաջան մանուկներն ևս իւրեանց ուսուցիչ Պարոն Թովմայեանի հետ ուրախութիւն էին զգացել հանդիսատես լինելու, նոցանից երկուքը ՝որք են Գարեգին Թադէոս Գրիգորեան Ռալաբաջեանց և Վահան Յովհաննիսեան Մակարեանց, իւրեանց աշակերտակիցների բերանից ևս յայտնեցին այս ճառերովը իւրեանց սրտի հրճուանքը։

ՏԵԱՐՔ ԻՄ, ՊԱՐՈՆՆԵՐ·

Ինչու՞ ենք արդեօք հաւաքվել այս յարկումը, այդ ի՞նչ մագնիս է, որ սրտերը քաշած է չորս կողմից դէպի ինքը· այս տեղ մի հանդիսի արարողութիւն է տեսանվում, այս տեղ հնչումեն ուրախութեան ձայներ, որպիսիք ութ հարիւր տարի է, որ այս գիւղը շրջապատող օդերի մէջ լսուած չեն: Կարծեմ, անցան այն թանձր մթութեան տարիները, երբ մեր հայրերը իրեար անգամ չէին ճանաչում· կարծեմ, վերջացած է այն տգիտութիւնը որոյ ձայնի արձագանքը մեր ապառաժները սովորած էին կրկնել:

Ա՜խ, տեարք իմ, ձեր երեսի վերայ շողշողուն ոգեւորուած եռանդը շարժումէ իմ սիրտը, դուք ձեռնարկած էք մի գործի որի մէջ միայն ներկայումս տեսանվումէ ձեր անձնական, ձեր եղբարց, ձեր որդւոց և բոլոր Հայերի փրկութեան պայմանը: Այս դուռը որ դուք բացումէք մեր առաջև մի դուռն է, որ նորա միջից ներս մտանողը կ'ապրի մտաւորական կեանքով, որովհետև մեք ապրելու չէինք միայն անբան արարածների պէս, մեք ապրելու չէինք լոկ մարմնով, այլ և մի ամենապատուական կեանքով, որին ասումենք բարոյական կեանք:

Այս ամենս ահա և ուրիշ շատ ու շատ բարիք, որ ես չկարողացայ մի առ մի թուել, ունին յառաջանալ Ձեր փրկաւէտ ձեռնարկութենից· դորանով կը փառաւորվիք Դուք, ձեր հայրական պարտքը լրացած լինելով, և կը դառնաք արժանի հայրեր արժանի որդիների: Այս բոպէիս ամենայն լեզու, ամենայն սիրտ, ամենեցուն հոգին ձայնարկումէ դէպ 'ի

Ձեզ· փառք ձեր որդեսիրական հոգաբարձութեանը, փառք ձեր զոհաբերութեանը, փառք ձեր հանդիսին:

Գաբրիէլ-Թադէոս Գ· Բալաբանեանց·

ՏԵԱՐՔ ԻՄ·

Այսօրեան օրս մի մեծ խորհուրդ է ստանում իւր փառաւորութեամբ անցած թշուառ օրերից յետոյ և աւելի այն պատճառով, որ դորանով Աղուլեաց ազազայ լուսաւոր օրերի գարագլուխ պիտի կազմուի: Այսօր տօնվումէ մի ուսումնարանի բացումը, որ մի մեծ բարութեան կարապետ է գալոց սերնդի համար: Ուսումնարան և կեանք, այս երկու խօսքը շատ մօտ և կից կապած են իրեարու հետ· իսկապէս, առանց ուսումնարանի չկայ և կեանք, ինչպէս առանց կեանքի լինելու չէ ուսումնարան: ,,Կայրը զրկվումէ արեգակի ճառագայթներից, ասումէ երանելի Վարդապետն Եղիշէ, տգէտը զրկվումէ կատարեալ կեանքից:'' Ուրեմն որչափ երջանիկ են ձեր որդիքը և մանաւանդ աղջիկները, որ ձեր իմաստուն հայրական հոգաբարձութեամբ ապրելու են կատարեալ կեանքով: Երանի՜ նոր ծնուողներին, որ մարմնով ծնանելու հետ միասին կը վերածնուին նաև մտաւորական կեանքով:

Տեարք իմ, մեր հայրերը շատ են չարչարուած և հալածուած· շատերը մեռած են թողնելով մեզ այնպիսի յիշատակներ, որ յաւիտեան քաւվելու չեն· ինչից են յառաջացած արդեօք այնքան չարիք, որոց հետևանքը ծանրանումեն և մեր վերայ· այն տեղից ահա, որ մեր պատմութեան ոչ մի անկիւնում ազ-

գային դաստիարակութիւն ասած խօսք չենք լսում ոչ մի տեղ։

Այժմ ամեն տեղ փայլում է գիտութեան լոյսը, ամենեքեան խնդրումեն լուսաւորութիւն, մեք ևս թող լուսաւորվենք, մեք, որ զրկված ենք ամեն բարեմասնութենից, գոնէ Աստուծոյ մեղ պարգևած լուսիցն ևս չզրկվենք։

Վահան Յովհաննէսեան Մակաբեանց։

Առաջիւ յետոյ, ազգային քաղցրաձայն երգերը և Պահպանիչը լցուցին սիրտերը հանդիսականների, ոչ միայն արանց այլ և կանանց, որ ներկայ էին այն տեղ շրջապատելով մանուկ աղջիկները, որ եկած էին մասնակից լինելու իւրեանց եղբարց ճշմարիտ բարեբաղդութեան տօնահանդիսին։

Ո՞հ, որքո՞ սիրտը չէ փառաւորուելու այս սրտաշարժ տեսարանով, որ անձը որ ամերիկացի մանուկների դաստիարակութեան եղանակի վերայ գրած յօդուածները կարդացել էր, ուշը դարձուցանելու չէր դէպի Աղուլիս և տեսանելու թէ ի՞նչպէս համակից սիրով երկու սեռից մանկունքն միասին տօնախմբելով աղայոց ուսումնարանի բացման հանդէսը, դիմումեն դէպի սուրբ Գրիգոր, աղայքը մոմերը ձեռքին, իսկ աղջկունքը ծաղկանց փունջերը։ աղայքը իրենց վառած մոմերովն են փառաւորում հանդէսը, իսկ աղջկունքը ծաղիկներ սփռելով երգասաց յառաջընթաց եկեղեցական դասու և իւրեանց քաղցր, հոգատար հայրերի և մայրերի ոտքերի տակ, որ հետևում էին հանդիսին նոյնպէս միասիրտ և միահոգի։ կարծես այսօր մոռացուած էր Աղուլեաց ասիական կանանց մէջ այն վնասակար և կորստաբեր սովորութիւնը փախչել այր մարդերի հասարակութենից։

Սուրբ Գրիգոր եկեղեցումը երեխայք ներկայ եղան սուրբ պատարագին, ժողովրդեան սիրտը լցվեցաւ մեծ հրճուանքով, լսելով իւրեանց մանուկների և աղջիկների բերանով երգած քաղցրաձայն ,,Տէր ողորմեա'' երգը։

Պատարագը աւարտելուց յետոյ կատարվեցաւ և այս տեղ հոգեհանդիսա'ի յիշատակ բարերարաց օրիորդաց ուսումնարանին, որից յետոյ մեք խօսեցանք այս մի քանի խօսքը։

ՊԱՐՈՆՆԵՐ։

Այս առաջին անգամը չէ, որ ես մի մեծախորհուրդ ազգային հանդիսի մէջ յանձն եմ առած խօսել։ այդ բաղդաւորութիւնը վիճակուած է ինձ այս տարի մի քանի դիպուածներում։ թէպէտև զրով ատեան դուրս գալս եղել է մի անգամ, երբ երեխաներից մի քանիքը փորձումէինք ձեր առաջև և պատրաստումէիք նորանց դէպ'ի նոր յառաջադիմութեան ասպարէզ։ բայց բանիւ շատ անգամ առիթ եմ ունեցել Զեղանից շատերի հետ պատկառելի ժողովներում այս նիւթոյս վերայ երկարօրէն խօսիլ։ Ես չեմ մոռացել ապրիլ ամսոյ մէջ եղած մի քանի անընդհատ ժողովները, որոց մէջ 'ի Տէր հանգուցեալ Գրիգոր Տէր Մկրտչեան հայրենասէր երիտասարդի ազգասիրական զրգռողութեամբ Զեղանում յղացած խորհուրդը ուսումնարանի հիմնարկութեան մասին, սկսաւ մարմին առնուլ։ ես չեմ մոռանում և Դուք իսկ չպիտի մոռանաք այս տեղ այն երանելի հան-

զուցկոյ անունը, որովհետև նորա աշխատութեամբ գրած կանոնագրութիւնը ցուցանումէ, թէ ազգասիրութեան կայծը վառ է եղել բարի յիշատակների արժանի պարոնի սրտում և թէ նա հոգով չափ ցանկացել է Զուլիսումը օրինաւոր ուսումնարան շինել, և այս պատճառով նորա անունը պիտի անմահ մնայ ուսումնարանի տարեզրի մէջ. ես պիտի յիշեմ այս տեղ Ձեր բոլորեցուն հոգիների եռալը սիրով լուսաւորութեան, ես պիտի գովեմ և գովասանեմ հրապարակով այն լայնասիրտ վեհանձնութիւնը և առատ հոգին որով շատերը Ձեզանից ըստ իւրաքանչիւր կարողութեան նուիրեցին մեծ մեծ գումարներ իւրեանց մանուկների լուսաւորութեան տունը հաստատելու և ապահովելու համար: (Այդ յարգոյ ազգասիրաց անունները կը յիշատակեմ խօսքիս վերջում): Լինդ ամիս սորանից յառաջ ամենքդ ներկայ էիք սուրբ Թովմայ առաքելոյ վանքումը. կա՞ր արդեօք այն հոյակապ շինութեանց մինն անդամ, և ի՞նչ գումարով այն մեծածախ շինուածները կարճ միջոցում զլուխ եկան. երկու երեք ամիս յառաջ ո՞ւր էին Զուլիսում այս ուսումնասէր և հայ մանուկների դաստիարակութեան համար զլուխները յետ դրած երիտասարդները. ով այսպէս ժողովեց սորանց այս տեղ, ո՞վ է այս բոլորը արդիւնաւորութեանց պատճառը: Այս ամենը յառաջացած է Ձեր ազգասիրական ընծայաբերութեամբը: Այո՛, ես ականատես էի թէ Ձեր յարգոյ պատգամաւորը՝ Պարոն Գրիգորափոր Տէր Մկրտիչեան ուրախի յօժարութեամբ յանձն առաւ թողուլ իւր բոլոր անձնական գործերը և դիմել առ Ս. Հայ-

փառ Կաթուղիկոսը, ուսումնարանաց հաստատութեան հրամանները խնդրելու և ուրախի արդեղքների յաղթելով այդ տեղ, կարողացաւ ստանալ ձեր երկու ուսումնարանաց կոնդակները: Այս այս բոլորը գեղեցիկ ձեռնարկութեանցն ականատես վկայ լինելով, աւելորդ կը համարէի բացատրել ձեզ ձեր ուսումնարանի խորհուրդը և ուսման կարևորութիւնը որ, ինչպէս գործից երևումէ, Դուք ինքնանքդ քաջ հասկացել էք. սակայն այս նշանաւոր օրիս, որ տեղից պիտի սկսանի ձեր երկու ուսումնարանաց տարեդարձը, ի՞նչ այլ նիւթի վերայ հարկաւորութիւն կայ խօսելու, եթէ ոչ ուսումնարանի և ուսման:

Ուսումը և գիտութիւնը լինելով ամենագլխաւոր պիտոյքը մարդկային ազգի, թէև 'ի սկզբանէ անտի քանի մի ազգերի մէջ ունեցան իւրեանց յարդը, և իւրեանց մեծ ներգործութիւնը, առաջնորդելով մարդերին դէպ 'ի մեծամեծ մտաւոր վաստակներ և երևելի գիւտեր, բայց վերջին դարերումս իւրեանց յաղթանակը կանգնեցին համարեա թէ ամեն տեղ. մարդկութիւնը ներկայումս հասկանումէ, թէ ուսումն է այն բանը, որ տալիս է մարդուն իւր բուն արժանաւորութիւնը, որ տալիս է նորան ճանաչել իւր Աստուածը, իւր ազգը, եղբարքը և իւր անձը, իւր առ Աստուած և առ մարդ ունեցած պարտականութիւնքը: Մեր ազգը դարերով յառաջ 'ի թիւս միւս ազգերի ճանաչեց ուսման կարևորութիւնը. մեք ունեցել ենք անձնանուէր հոգևորներ, որ ուսման նիւթապէս անհրաժեշտ կարևոր գործին՝ գիրը, հնարաստեղծելու համար, հայ ժողովուրդքը իւրեանց մայրենի լեզուաւ իւրեանց Աստուածը փառաբանել

տալու, նոցա իւրեանց առ ազգն ունեցած պարտակա-
նութիւնքը լցուցանել տալու համար տարիներով ու
անհնարին տանջանքով ճանապարհորդած են դէպ 'ի
օտար աշխարհներ, ցրտի, քաղցի, ծարաւի և ջերմու-
թեան տանելով, օտար լուսաւոր ազգերի դռներում
մուրանալով գիտութիւն և լուսաւորութիւն, և այս-
պէս պատճառ են դարձել ազգի յառաջադիմութեան,
դարաւոր ժամանակների անմտութեան քնից յետոյ:

Մեք ունեցել ենք այս ասպարիզումն Մեսրոպը
մաշտոց, մեք ունեցած ենք յունական գիտութեան
դպրոցներում իւրեանց ուսումը ստացած հայ մար-
դիկ, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի, Սամ-
բրէ, Կորիւն, Դաւիթ անյաղթ և այլն: Մեք ու-
նեցած ենք Սահակ Պարթև, որ թեւակցելով Մես-
րոպին դարձել է հոգաբարձու հայր հայկազեան երի-
տասարդների գիտական կրթութեանը, մեծարգիւն
մշակ հայկազեան դպրութեան, այլև ազգասէր ուսու-
ցիչ շնորհալի աշակերտների, որ յետոյ վերատառուած
են անուամբս սուրբ թարգմանիչք. մեք ունեցած ենք
Ներսէս շնորհալի, Ներսէս Լամբրոնացի, Գրիգոր
Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, որ իւրեանց ժա-
մանակին և հանգամանքին նայելով, իւրեանց ու-
սումնական վաստակներով փառաւորել են այսա-
կան ազգը. սակայն ժողովրդական ուսումը, գիտու-
թիւնը իբրև հասարակաց ժառանգութիւն, ոչ մի
ժամանակ այնքան չէ տարածել իւր թևերը, որքան
այս վերջին դարումս: Հին ժամանակներում գիտու-
թիւնը ունէր պատերազմելու բազմաթիւ արգելքների
ընդդէմ. նորա սահմանքը շատ նեղ էին. մարդկային
մտքի և հոգու վերասլացքը կաշկանդուած, մանա-

ւանդ թէ սարկացուցիչ, լուսից փախչող և լոյսը հա-
լածող պապական հոգևորների բռնաւոր իշխանու-
թեան լծի տակ. եթէ երևելի հանճարներ ևս ժամա-
նակ առ ժամանակ լոյս աշխարհ էին երևում, ահով
ու երկիւղով այն դժոխամման ինկուիզեցիոնի կրակի
ու սրի երեսից կապուած, կարող չէին ներդործել
ժողովրդի բազմութեան վերայ:

Բայց նախախնամութեան աչքը հսկումէր եւրո-
պական մարդկութեան վերայ. եկաւ, հասաւ փրկու-
թեան ժամանակը և միջին դարերի վերջում, այսինքն
ժԷ դարում Եւրոպան յաղթեց ամեն դժվարութեանց
և ահա բարձր 'ի գլուխ պարծենում է երկրիս միւս
ազգերի առաջև: Բայց, վերջին դարումս որչափ
մարդկային ազգը յառաջադէմ է եղած, այնքան ևս
ուսումը և գիտութիւնը դարձել է ժողովրդի և բազ-
մութեան ժառանգութիւն:

Մեր ազգն ևս հետևելով ուրիշ լուսաւորեալ ազ-
գերի, չկամի դոցա գովանի շաւղից յետ մնալ. մեզա-
նում ևս հասկացող մարդերի թիւն յաւելանումէ
օրըստօրէ և ամեն տեղ ուսումնարաններ են բացվում,
ամեն տեղ մեր մանուկների դաստիարակութեան վե-
րայ աշխատումեն: Արդարև տակաւին կան շատ խա-
ւարասէրներ որոնք կամ անձնական օգտի կամ ու-
րիշ անարգ խտերի պատճառաւ խափանումեն և
ճնաս են տալիս բարի բարի ձեռնարկութիւնների.
բայց ինչ և կամենան առնել, եթէ լուսաւորութեան
մայիսը բանական հոգիների մէջ զարգացրել է ու-
սումնասիրութեան սերմը, որքան և կամին չարամիա-
ները խափան լինել նորա բուսանելուն, թէ և մի քա-
նի ժամանակ յետ կ'ձգեն, բայց նա գեանի տակին

մնացողը չէ, պիտի դէպ 'ի վեր ծլի, աճի, զօրանայ, ծաղկի և պտուղ տայ իւր ժամանակին։

Այժմեան դարը քաղաքագործութեան դար է, այժմ ազգերի առաջին նպատակն է բարեքել ուսմամբ և գիտութեամբ իւրեանց վիճակը. ուստի հետևումէ որ դոցա վերայ է հիմնած մարդուս և ազգերի բաղդաւոր կենցաղավարութիւնը։ Ուսումը և գիտութիւնը հարկաւոր են մարդուս անխտիր ամենայն ձեռնարկութեան մէջ. նոցա կարօտ է ոչ միայն արական սեռը, այլև կանացի սեռը. զօրապետը ուսումնական հմտութեամբ կառավարումէ իւր զօրքը, քաղաքապետը գիտութեան առաջնորդութեամբ կառավարումէ ժողովուրդը և ազգային վարչութեան ղեկը, վաճառականը ուսման շնորհիւն գտանումէ բոլոր հնարները խելացի և շահաւէտ կերպով լցուցանելու իւր առևտրական գործը, երկրագործը բնութեան օրէնքի գիտութեամբ կարող է միայն առատ չափով հնձել ինչ որ սերմանել էր հողի ծոցում։ Այսմեն ժամանակ գիտութիւնը և գիտունը կեանքի ասպարիզում յառաջընթաց են եղած, բայց տգիտութիւնը և տգէտը յետսամնաց։

Անգլիստանումը քանի մի ժամանակ յառաջ, երբ դեռ ևս ոտք չէին կոխած այն տեղ Անգլիացիք, այսոց ազգը համարվումէր առաջին հարուստը, այսի ձեռքումն էր բոլոր վաճառականութիւնը, և դորա հետ միասին բոլոր կառավարութիւնը այն աշխարհի. անմոռանալի են այն ժամանակի հայերի մեծ հարստութիւնքը. դեռ ևս մինչև այսօր նոցա կտակած արծաթի դումարների հետքը երևումեն։ Սակայն երբ անգլիական ազգը ոտք դրեց Անգլիստանի

հողի վերայ, երբ տգէտ և անուս հայ վաճառականը մի և նոյն գործի մէջ հանդիպեցաւ լուսաւորեալ և ուսած Անգլիացուն, ի՞նչ եղան մեր հարուստ այրերը, ո՞ւր գնացին նոցա մեծ հարստութիւնները. նոցա նաւերը չկործանուեցան. ընդհակառակն, նաւագնացութիւնը ծաղկեցաւ, Եւրոպայի հետ վաճառականութիւնը հաղորդակցութիւն ունեցաւ և առուտուրքի ճանապարհը աւելի հեշտացաւ։ Այնու ամենայնիւ Անգղիացւոց ուսման և հմտութեան առաջև յաղթուեցաւ տգէտ հայի վաճառականութիւնը, անգղիական քսակները բացվեցան և հեղհեղէ հայերի գրպաններից փոխադրուեցաւ արծաթը նոցա մէջ։ Անգկաստանի հայը տեսաւ իւր յետամնացութիւնը, զրկուեցաւ հարստութենից և կարող չէր դարձուցանել իւր կորուստը։

Դիտենք մեր այժմեան ժամանակը յատկապէս. ահա՞ այսօր մի և նոյն առևտուրն է լինում, մեր ազգի մէջ, մի և նոյն օգուտն է յառաջ գալիս, ինչպէս մի քանի տարի յառաջ. ամենևին ոչ։ Ինչ՞ցն է այդ։ Որովհետև տգէտ և ռամիկ հայ վաճառականին հակառակորդ է հանդիսացել աջողակ Գաղղիացին, Գերմանացին և մեր հացը մեր ձեռքից խլումէ, այնպէս որ մեք ինքներս չենք ղղում։ մեք ինքներս մի և նոյն բանը չափաւոր գնով չենք գնում այիցը. մեկին երկու, երեք վճարելով Ֆրանսիացու մագազինն ենք մտնում։—Ինչո՞ւ համար։—Որովհետև նա գիտէ խոհեմութեամբ մարդու հետ վարվել, նա քաղաքագործուած է, նա մի խօսք է ասում, աւելորդ և սուտ երդումներ չունի, իսկ մեր այը հազար անգամ տգիտութեամբ սուտ երդումէ, ինքն ամենևին

չճանաչած բանին հաղար գովասանք է տալիս, մի խօսքով, Հայը կոպիտ է, վարվել չգիտէ։ Ինչեցն է։ — Տգիտութենից։

Փառք նախախնամութեանը, մեր ազգը արդէն նկատում է այս ահագին անդունդը իւր առաջև բացուած, նա կամենում է զգուշանալ դորանից. զուշակելով իւր գալոց կորուստը, եթէ յետ կը մնար յառաջադիմութեան ճանապարհից, աշխատում նա բարւոքել իւր վիճակը։ Հայը հասկացել է արդէն, որ ուսումը ներկայ դարուս առաջին պիտոյքն է և ջանալիր է առ փոքր փոքր տարածել դորան իւր ազգի մէջ. վերջին տարիներումս մի քանի կրթուած պատանիք մեծ յոյս են տալիս մեզ իբրև հայրենասէր հոգաբարձուք իւրեանց հայ մանուկների և աղջիկների դասատարակութեանը, միայն թէ համակից գործակցութիւնը և օգնականութիւնը յետ չմնայ մեր հոգևոր և եկեղեցական պաշտօնեաների և կարող ու հարստական Հայերի կողմից։

Պարզէն շատ բացայայտ է, որ ազգը պիտի յառաջ գնայ, շատացնելով իւր ուսումնարանները և տարածելով գրագիտութիւն և ուսումն։

Սկզբումն ասացի, որ Աղուլիցիքդ արդէն հասկացել էք ձեր պիտոյքը, ասացի որ ձեռնտութիւնը հասարակաց է, այս բարի գործը յառաջ տանելու համար։ Թէպէտ և այս պարծանք է Աղուլիսի անունը, բայց եթէ ճիշդ կշռով կշռենք, ի՞նչ է ձեր արածը։— Լցուցանել իւր պարտականութիւնը։ Եւ ամենայն մարդու վերայ կայ այդ հարկը, ամեն մարդ պիտի իւր մանուկների ապագայի վերայ մտածէ, որովհետև

ներկայ դարս պահանջում է ամենից յառաջ ուսումն, այդ է ամենից յառաջ մեր մտածելիքը։

Մինչև այժմ մեր հայրերը այնքան մեղադրելի չէին, և մեք, նոցա որդիքս, չունինք իրաւունք դատապարտել նորանց, որ մեզ չեն տուել ուսումն. ժամանակների դառնութիւնը թոյլ չէ տուել այդպիսի հոգածութիւն. տգիտութիւնը իւր թանձր քօղով ծածկած է եղել ամենայն միտք. խղճալի հայրը հազիւ կարողացել է ճարել իւր ընտանիքի օրական ապրուստը անտանելի և տաժանելի չարչարանքով, բայց այսուհետև ինչպէս պիտի արդարանայ մի հայր իւր որդու առաջև, երբ աշխարհս և նորա հետ Հայերս ևս հասկացել ենք ուսման կարևորութիւնը, մանաւանդ կարողութեան տէր հայրը։ Բայց, պարոններ, մարդս ընկերական էակ է, մարդս պարտականութիւն ունի ոչ միայն դէպ՝ի իւր հարազատ զաւակները, այլ և դէպ՝ի իւր ընկերը, դէպ՝ի տկարը, դէպ՝ի տգէտը։ Մեր ազգի անկարողների պատասխանատուքն ևս կարողներն են. ապագայ սերունդը պիտի օրհնէ այն բարերարաց անունները, որ իւրեանց խնամքը տարածել են ոչ միայն իւրեանց յատուկ ընտանիքի վերայ, այլև ձեռն օգնութեան են մեկնել ազգի անկարողներին։ Սորա հակառակ, մի օր ժամանակը պիտի անէծք կարդայ այն ինքնապաշտ, անձնասէր մարդերի վերայ որ միայն իւրայիններին հոգսում են եղած, առանց մտածելու հասարակաց օգուտը։

Ի՞նչքան մեծ գովութեան արժանի էք Աղուլիցիքդ, որ հիմնելով այս երկու սեռից ուսումնարանները, որոց բացումն է այսօր և որոյ տարեգլուխը պիտի համարվի այս հանդիսաւոր օրս, դուք ոչ միայն

ձեր որդւոց համար էք աշխատել, այլ և ձեր անկարող չքաւորների։ ի՞նչքան գովութեան և օրհնութեան արժանի են այն պարոնները և տիկինները, որ բաց 'ի նեղութիւն և աշխատութիւն յանձն առնլուց, իւրեանց առատ նուէրքով պատճառ են դարձել թշուառ հայ զաւակների հոգեղէն բաղդաւորութեանը։ Ձեր ուսումնարանաց կանոնադրութիւնքը մեծ մասամբ աղքատ ծնողների զաւակների օգտին են պատկանում։ Դուք, Ազուլեցիք, լաւ հասկացաք ժամանակի պիտոյքը, դուք ոչ միայն բացիք տղայոց ուսումնարանն, այլ և աղջկանց, դուք ճանաչեցիք, թէ մինն առանց միւսոյն ոչինչ է։ առողջամիտ դաստիարակութիւնը թոյլ չէ տալիս, որ մի գերդաստանի մէջ մի սեռը լինի կրթեալ և գիտուն, իսկ միւսը անկիրթ և տգէտ։ ի՞նչ տհաճութիւններ, ատելութիւններ, որով և խափանարարք ընտանեկան բաղդաւորութեան չեն յառաջանալու, երբ որ մի լուսաւոր այր մարդ պիտի կենակից լինէր մի տգէտ կնոջ կամ մի գիտուն կին մի տգէտ այր մարդու հետ։

Երեխայի դաստիարակութիւնը մեր պարտքն է։ կրթեալ մայրը իւր կաթի հետ միասին ծորեցնումէ քնքուշ երեխայի հոգու մէջ առաքինութեան ընձիւղքը, կրթեալ մեր երեխան եօթն տարեկան հասակում ճանաչումէ իւր աստուածը, իւր ընկերը, իւր ազգը։ այդ երեխայի մտքի մէջ տպաւորուածը մնումէ անջնջելի մինչև 'ի գերեզման, և եթէ լաւ քննենք, ոչինչ կրթութիւն վերջումը կարող չէ բոլորովին անհետացնել այն տպաւորութիւնքը, որ երեխան ստացել է ծնողական տան մէջ։ Բայց ի՞նչքան տարբաղդ է այն ազգը, որոյ մանուկը մեր կաթի հետ

ծծումէ վայրենութիւն և ամեն անկարգութիւն։ ի՞նչ առնէ դաստիարակութիւնը, քանի տարիների կարօտ է նա, որ արմատախիլ առնէ երեխայի միջից նորա բիրտ սովորութիւնքը։ չենք ասում թէ անհնար է, այլ միայն շատ ու շատ դժուար է։ Ուրեմն եթէ մայրական պարտականութիւնը այսքան մեծ է, մայրեր պատրաստելն ևս առաջին պիտոյքն է։ աղջկանց ուսումնարաններն են, որ պիտի պարգևեն ազգին կրթեալ մայրեր, և տղայոց ուսումնարաններն են, որ պիտի պատրաստեն լուսաւոր հայրեր։ Ծնողքը լուսաւոր եղան, լուսաւոր կը լինին և որդիքը և թոռունքը և այնու հետև թող միամիտ լինի այն ազգը, որ ինքը կորչելու չէ մարդկութեան կարգումը։ երանի այնպիսի ազգին։

Գիտէք, ինչ մեծ, նշանաւոր և հայ ազգի համար նուիրական դար է եղել Ե։ դարը։ գիտէք, թէ մեր հայրերը ինչքան արիւն են թափել այդ դարումը, թէ և չեմ ասում, որ ուրիշ դարերում չէ թափուած խեղճ հայ ազգի արիւնը։ բայց այդ դարու արիւնը մեզ փառք է ժառանգել, այդ դարումը մեր հայրերը մեր համար պաշտպանել են Քրիստոսի սուրբ հաւատը և մեր ազգութիւնը, կուրծքը դէմ դնելով կատաղի Պարսից մոլեռանդն հալածասիրութեանը։ նոքա առանց քաղաքական գլխոյ և առանց օտարի օգնութեան, կարողացել են ամբողջապէս աւանդել յետնոցս մեր կրօնը և ազգութիւնը։ Ինչն էր նոցա ոգի և ոյժ տուողը։ Այն ժամանակի ուսումը։ և ես կ'ասեմ, ոչ այնքան այր մարդերի, որքան կանանցը։ Ե։ դարու մայրերն են պատրաստել այնպիսի քրիստոսասէր և ազգասէր որդիք։ Ե։ դարը մեր համար

օրինակ է. չգիտեմ, արդեօք մեր հայրերը Ե. դարու կ'ունենային այն քաջ սիրտը, եթէ նոցա մայրերը և կանայքը չլինէին լաւ դաստիարակուած։ Այս մի խնդիր է, որ պատմութիւնը ինքը պարզումէ. հայը ուրիշ ժամանակ ևս տեսել է շատ նեղութիւններ, բայց դոքա չեն եղել խորհրդաւոր, որովհետև, բացի կորցնելուց իւր նշանակութիւնը, հանդիպած էին ազիտութեան յաղթող հանդիսանալուցը. և ի՞նչ անէին խեղճ Հայերը, ինչպէս կարողանային ուսումն ունենալ, քանի որ, ինչպէս վերը յիշեցի, եթէ Եւրոպայումը ուսումը փակված էր պապերի ձնշող և ստրկացուցիչ իշխանութեան տակ, մեր մէջը ևս նոյն դրութեամբը պիտի լինէր անպատճառ, և աւելի թշուառ։ Հայը երբ է ունեցել հնար աչք բանալու թշնամի բռնակալներից, որ կարողանար ուշք դարձուցանել ուսման վերայ, թէև ասեմ, դեռ մեք շնորհակալ պիտի լինինք մեր նախնի հոգևոր հայրերից, որ այնչափ հարստահարութեանց և նեղութեանց միջոցում կարողացել են գնեա վանքերի խցերի մէջ պահել հայ լեզուն և գիրը, որ այսօր վերջին շնչի մէջ հասել է մեզ և մեր ժամանակի աշխատութեամբ սկսել է վերստին ծաղկիլ։

Այսօր ամեն տեղ Հայ ազգը սկսել է իւր լեզուովը խօսել, կարդալ և գրել. այսօր ամեն հայաբնակ տեղ, մանաւանդ Կ. Պոլսումը, Հայ ազգի ուսումնարանները նշանաւոր են, օրագիրներն յառաջադիմութեան յոյս են տալիս, ոչ միայն այր խմբագիրներն և հեղինակներն են շատանում, այլ և, ուրախութեամբ եմ ասում, մեր քնքուշ սեռի միջից ևս եղան և կան Պոլսումը կանայք և օրիորդներ, որոնք պարապումեն

գրաւոր աշխատութեամբք, հայ ազգկայ մատներն այսօր ասեղի հետ և գրիչ են բռնում և ազգի վերայ մտածում։

Յոյս ունինք, որ այսուհետև հայ ազգն ևս յետ չմնայ ուրիշ ազգերից, հայոց ապագայ սերունդը ճանաչէ իւր ազգութիւնը, և թէ մինչև ցայժմ կորցրել է շատ բան, այսուհետև ոչ միայն չթոյլ տայ կորչելու, ոչ միայն յետ բերէ կորածը, այլև աւելի ևս օգտի՝ թէ աստուածպաշտութեան, թէ ազգասիրութեան, թէ վաճառականութեան և թէ ուրիշ բանի մէջ։

Յոյս ունինք, որ մեր Ա. Հայրապետ Կաթողիկոսը, որի ուսումնասիրութիւնը իւր հովուապետութեան առաջին տարումն արդէն երևումէ որ անտես չարեց, մանաւանդ թէ ուրախացաւ, և մեծ սիրով շնորհեց ձեր երկու ուսումնարանների բացման կոնդակները, այսուհետև աւելի հայրական դութ և խնամք կ'ունենայ հայոց ազգի կրթութեան մասին։

Այժմ, Ազուլեաց յարգոյ հասարակութիւն, խօսքս դէպ 'ի ձեզ դարձնելով ասումեմ, որ ձեր արած մեծ գործը փառք և պարծանք պիտի ժառանգէ ձեր անունը, դուք բացիք ձեր որդւոց և բոլոր Պոլսի դաւառի հայ երեխաներին մի լուսաւորութեան ասպարէզ, դուք պիտի յաւիտեան անմոռանալի մնաք և ձեր յիշատակը օրհնութեամբ պիտի ասենն ձեր որդիքը. յառաջ տարէք, ուրեմն, այս գործը, մի դադարիք Ձեր առաքինութեան վաստակների մէջ, և մի մոռանաք, որ Դուք աշխատումիք Ձեր դալոց սերունդի բաղդաւորութեան վերայ։

Ձեր գերապատիւ հոգաբարձուքը, որոնք չեն խնայում իւրեանց աշխատութիւնը և որոց ջերմեռանդ

սպասաւորութեանը ազգին վայել է մեր ամենեցուն լեամեան շնորհակալութիւնը, ձեր գործակցութեամբ միայն կարող են արդիւնաւործ լինել և այս ձեր գործակցութիւնը այն պիտի լինի, որ Դուք հատուցանէք իւր ժամանակին, ինչ որ հարկաւորն է:

Ջերմեռանդ և որդեսէր տիկիններ, այսօր ձեր առաջև բացուած է ձեր ազայոց և սիրասուն աղջկանց լուսաւորութեան ճանապարհը, Ազուլեաց օրիորդաց ուսումնարանի փառքն ձեզ է պատկանում: Ձեր հոգաբարձութեամբ ձեր աղջիկները պիտի դաստիարակուին, մի օր արժանաւոր մայրեր դառնալու ազգի մանուկներին. ուրեմն, դուք մի խնայէք ձեր առ'ի սրտէ մասնակցութիւնը այս սուրբ գործին. որքան կարելի է յաճախ յաճախ եկէք, այցելութիւն Ձեր տնկած բանաւոր այգեստանին, ձեր մայրական քընքուշ խօսքերով քաջալերեցէք այս մատաղատունկ աղջիկները, որ այժմ շրջապատումն Ձեզ. սոքա պիտի լինին Ազուլիսի ապագայ յոյսերը, սոցանով պիտի զարգանայ Դողթան գաւառի հայը:

Ու Դուք, փոքրիկ աղջիկներ, որ զուարթ դէմքով կանգնած այս տեղ և անմեղ ժպտմամբ նայումէք այս աւուր հանդիսին, դուք ջանադիր եղէք պսակել ձեր ծնողաց աշխատութիւնքը, դուք և ձեր եղբայրները արժանի էք մեր փրկչի գիրկը վազելու, այս ուսումնարանը ձեր համար է, նա պիտի սպասաւորէ Ձեր օգտին և բարեբաղդութեանը. գործ դրէք մանկութեան ոսկի օրերը, ուսէք և իմաստանացէք, որովհետև առանց ուսման և իմաստութեան չկայ կատարեալ կեանք: Բարեբարոյ եղէք և ձեր ծնողացը սիրելի զաւակներ:

Լոկ դուք, Հայոց նորահաս մանկունք, այլ ի՞նչ էք սպասում: Ձեզանից եթէ ոչ շատերը, գոնէ մի մասը հասկանումէ իւր ծնողաց բարեգործութիւնքը, ձեր հայրերը աշխատումեն ձեզ ուսում տալ, յառաջ գնացէք ուսման մէջ, ձեր ուսուցիչները ձեր մէջ տեսանումեն ընդունակութիւն և սէր դէպի ուսումը, աշխատեցէք աճեցնել և պտղաբեր առնել նոցա աշխատանքը, ձեզանով և ձեզ նման մանուկներով պիտի յառաջ գնայ մեր ազգը, այնպէս արէք, որ Դուք մի ժամանակ պարծանք լինիք Ձեր հայկական անուանը. դուք և մեք պարտք ունիմք կատարելու, և այս պարտքն է հայ կրօնին և ազգութեանն ծառայելու. Ստուած տայ, որ ոչ մէկը մեզանից յետ չմնայ իւր պարտավճարութենից:

ԱՆՈՒԱՆԵՐ ՌԵԲԵՐԵՐԱՑ,

ՈՐՈՆՔ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆ ԵՆ ԱՐԵԼ ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԵԱՑ ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ:

Մանէթ:

1. Աղա Մկրտիչ Տէր Մկրտչեանցը նուիրել է հոգևոր ուսումնարանին մի անգամից 300
Նա և նուիրել է մի անգամից 3,600
Որ այս գումարի տոկոսիքն մշանջենաւորապէս պահվին ուսումնարանումը վեց որդեգիրք. մի որդեգիր իւր իսկ Աղա Մկրտչի անուամբ. մի որդեգիր իւր որդի Պարոն Յակոբի անուամբ. մի որդեգիր Պարոն Քրիստափորի անուամբ. մի որդեգիր Պարոն Մարտիրոսի անուամբ և երկու որդեգիր հանգուցեալ Գրիգորի անուամբ, որի անունը, ինչպէս ասացի վերն՝ կապուած պիտի լինի Ագուլեաց ուսումնարանի լուսաւորութեան հետ:
2. Պարոնայք Հայրապետ, Մկրտում, Մինաս և Թևան Արասխանեան Եղբարքը նուիրել են մի անգամից ... 1,200
3. Պարոն Թոմաս Ալանեանցը նուիրեց մի անգամից ... 300

Մանէին.

Նա եւ նուիրեց մի անգամից 600

Որ այս գումարի տոկոսիւքն մշտապէս իւր անունովը պահվի ուսումնարանումը մի որդեգիր։

4· Գեռահասակ Աղեքսանդր Տէր Մկրտչեանցն՝ հանդուցեալ Աւետիս Աղայի որդին նուիրել է մի անգամից· 300

5· Գերապատուելի Տիկին Սառա Տէր Մկրտչեանց այրին հանդուցեալ Աւետիս Աղայի նուիրել է մի անգամից 1,200

Որի տոկոսիւքը պահվի մշտապէս երկու որդեգիրք՝ մինը իւր հանդուցեալ սկեսրայր՝ մահտեսի Գալուստի անունով եւ միւսը հանդուցեալ աւետիս Աղայի անունովը։

6· Պարոն Գասպար Ալանեանցն նուիրել է մի անգամից· 300

Նա եւ նուիրել է մի անգամից 600

Որի տոկոսիւքը պահվի իւր անունովը մշտապէս մի որդեգիր։

7· Մահտեսի Յովհաննէս Տէր Ջանեանցն նուիրել է մի անգամից 300

Նա եւ նուիրել է մի անգամից 600

Որի տոկոսիւքը պահվի իւր անունովը մշտապէս մի որդեգիր։

8· Պարոն Մարտիրոս Մէ՛ Ստեփանեան Տէր Յովակիմանցն նուիրել է մի անգամից 300

9· Պարոն Մինաս Շահնազարեանցն նուիրել է մի անգամից 300

10· Պարոն Փանի Փանեանցն նուիրել է մի անգամից .. 300

11· Պարոն Կարապետ Աբրահամեան Բարխուդարեանցն նուիրել է մի անգամից 300

12· Պարոն Մինաս Մուրատեանցը նուիրել է մի անգամից 300

13· Պարոնայք Եղբարք Տէր Միքայելեանքն Մերամդուլոյ որդիքն նուիրել են մի անգամից 300

14· Պարոն Բաղդասար Փանեանցը նուիրել է մի անգամից· 300

15· Պարոն Սարգիս Փանեանցը նուիրել է մի անգամից· 300

16· Պարոնայք՝ Մինաս, Խուդի եւ Մէ՛ի Գեւորգ բարխուդարեանքը նուիրեցին մի անգամից 300

17· Պարոն Մելքոն Ալթաբեգեանցը՝ ի յիշատակ իւր հօրն նուիրել է մի անգամից 300

18· Պարոն Գեւորգ Ալանեանցը նուիրել է մի անգամից· 500

19· Պարոնայք՝ Եղբարք, Զաքարիա, Յովհաննէս, Մկրտիչ եւ Կարապետ Ադամիրզեանքն նուիրել են մի անգամից 1,200

20· Պարոն Հայրապետ Դուլզարեանցն նուիրել է միանգամից 300

Մանէին.

21· Պարոն Ստեփան Դուլզարեանցն նուիրել է մի անգամից 300

22· Պարոն Մէ՛ի՛ Թեւան Հախնազարեանցն նուիրել է միանգամից 500

23· Պարոն Մելքոն Քալանթարեանցն՝ ի յիշատակ հանդուցեալ հօրն Խաչատուրայ նուիրել է մի անգամից· 300

24· Պարոնայք՝ Եղբարք Նիազ եւ Յովսէփ Մարգարեանք նուիրել են մի անգամից 300

25· Պարոնայք՝ Եղբարք Սարգիս, Բաղդասար, Գեւորգ եւ Մամիկոն Ղարիբեանքը նուիրել են մի անգամից ... 400

26· Պարոն Բաղդասար Սաֆրազեանը նուիրել է մի անգամից 300

27· Պարոն Մինաս Փանեանցը նուիրել է մի անգամից .. 300

28· Նոյն Պարոն Թոմաս Ալանեանցը նուիրել է մի անգամից 600

Որի տոկոսիւքը պահվի մշտապէս իւր հանդուցեալ Հայր Գաբրիելի անունովը մի որդեգիր։

29· Նոյն Պարոն Թոմաս Ալանեանցն նուիրել է մի անգամից 600

Որի տոկոսիւքը պահուի մշտապէս մի որդեգիր իւր հանդուցեալ եղբայր Աւիտիսի անունովը։

30· Պարոնայք՝ Եղբարք Յարութիւն, Խաչատուր, Մկրտիչ եւ Յովհաննէս Փանեանքն նուիրել են մի անգամից 800

31· Պարոնայք՝ Եղբարք Առաքել եւ Յակովբ Դաւթեան Փանեանքն նուիրել են մի անգամից 300

32· Մահտեսի Մանգասար Խօջամիրեանցն նուիրել է մի անգամից 300

33· Պարոնայք՝ Յոհան, եւ Յարութիւն Սիմոնեանքը նուիրել են մի անգամից 300

34· Պարոնայք՝ Հայրապետ, Մկրտում, Մինաս եւ Թեւան Արասխանեան Եղբարքը նուիրել են մի անգամից· 600

Որի տոկոսիւքը մշտապէս պահվի մի որդեգիր իւրանց հանդուցեալ հօր Արասխանի անունովը։

35· Պարոն Հայրապետ Համբարձումեանը նուիրել է մի անգամից 300

36· Պարոն Յովհաննէս Սաֆրազեանը նուիրել է մի անգամից 300

37· Պարոն Սարգիս Բեգլարեանցը նուիրել է մի անգամից· 300

Նա եւ նուիրել է մի անգամից 500

Որի տոկոսիւքը մշտապէս պահվի մի որդեգիր իւր հանդուցեալ Մկրտիչ հօր անունովը։

Նոյն Պարոն Բեգլարեանցը նուիրել է մի անգամից· 300

Մանէթ.

'Ի յիշատակ իւր հանգուցեալ հօր Եղբայր Մէ՛ի՛" Աստուածատուրին։

38. Պարոն Յովհաննէս Բեզլարեանցը նուիրել է 'ի յիշատակ իւր հանգուցեալ հօր Առաքելին 300

39. Պարոն Մարգար Խօջամիրեանցը նուիրել է մի անգամից 300

40. Պարոն Սարգիս Խօջամիրեանցը նուիրել է մի անգամից 300

41. Պարոնայք Կարապետ և Յովհաննէս Կոնստանդինեանքը 'ի յիշատակ իւրեանց հանգուցեալ հօր Սարապիոնի նուիրել են մի անգամից 300

42. Պարոն Առաքել Խօջամիրեանցը նուիրել է մի անգամից 300

43. Պարոն Մելքոն Փանեանց 'ի յիշատակ որ 'ի Մոսկվա հանգուցեալ ամուսնոյ իւրոյ Աննայի 300

44. Պարոնայք Եղբարք Ներսեսեանց 900

45. Պարոն Զաքարիա Հախնազարեանց 300

46. Պարոնայք Եղբարք Բաղդիեանց 300

47. Պարոն Դանիել Աբիեանց 300

48. Պարոն Ալէքսանդր Ասլանեանց 300

49. Պարոն Մէ՛ի՛" Աւետիս Համբարձումեանց 300

50. Պարոնայք Եղբարք Ստեփան, Յովհաննէս և Մկրտիչ Թաթոսեանց 400

51. Պարոն Սարգիս Ասլանեանց Երէք Արքունական Տոմսակ 300

ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԲԱՐԵԲԱՐՔԸ։

1. Աղա Մկրտիչ Տէր Մկրտչեանցը նուիրել է մի անգամից 2,000

Որի տոկոսիւքը մշտապէս ուսանին հինգ որդեգիր աշակերտուհիք, մինը իւր ամուսին Տիկին Եղիսաբեթի անունովը, մինը իւր հարս տիկին Նինոյ Գէորգեանի անունովը, մինը իւր հարս տիկին Սոփիա Միքայէլեանի անունովը, մինը իւր հարս տիկին Եկատարինէ Միքայէլեանի անունովը, և մինը իւր հանգուցեալ Գրիգոր որդւոյ անունով։

2. Պարոն Թոմաս Ասլանեանցը նուիրել է մի անգամից ... 400

Որի տոկոսիւքը մշտապէս պահվի մի որդեգրուհի իւր ամուսին տիկին Աննման Մարգարեանի անունով։

3. Տիկին Սառայ Տէր Մկրտչեանցը իւր հանգուցեալ սկեսրայր Շողակաթ Աւագեանի, ամուսնոյ Մէ՛ի՛" Գալուստ տիյիշատակի համար նուիրել է մի անգամից 400

Մանէթ.

Որի տոկոսիւքը մշտապէս պահվի մի որդեգրուհի։

4. Պարոն Մէ՛ի՛" Յովհաննէս Տէր Զանեանցը նուիրել է մի անգամից 400

Որի տոկոսիւքը պահուի մի որդեգրուհի իւր ամուսին տիկին Հռիփսիմէ Մէ՛ի՛" Սեթեանի անունովը։

5. Պարոն Մելքոն Ամբարեգեանցը նուիրել է մի անգամից. 400

Որի տոկոսիւքը մի որդեգրուհի պահվի մշտապէս 'ի յիշատակ մօրն Եղիսաբէթ Մէ՛ի՛" Գալստեանի անունովը։

6. Դուս Պարոն Թոմաս Ասլանեանցն նուիրել է մի անգամից. 400

Որի տոկոսիւքը մի որդեգրուհի մշտապէս պահվի իւր հանգուցեալ մօր Անթառամ Գրիգորեանի անունովը։

7. Պարոնայք Արասխանեան Եղբարքը, Հայրապետ, Մկրտում, Մինաս և Թէան նուիրել են մի անգամից 400

Որի տոկոսիւքը մշտապէս մի որդեգրուհի պահվի 'ի յիշատակ իւրեանց հանգուցեալ մօր՝ Բալասան Մելքի Արամղուլեանի անունով։

8. Պարոն Սարգիս Բեզլարեանցը նուիրել է մի անգամից. 400

Որի տոկոսիւքը մշտապէս մի որդեգրուհի պահվի իւր հանգուցեալ մօր Ղանաթելի անունովը։

Այս բարերարքը անմահացրել են իւրեանց անունը։ Յոյս ունինք, որ սոցա օրինակին դեռ շատերը պիտի հետևին, որոց անունքը կը կարդացվին ուսումնարանաց տարեդարձի օրը և կը տպուին իւր ժամանակին։

Շատանա՞ն այսպիսի հայրերը։ Կեցցե՞ն այսպիսի հայերը։ Ապա հանդէսը օրինաւոր կարգաւորեալ գնաց հոգևորական դասու հետ ըստ առաջնոյն դէպի աղջկանց ուսումնարանը։ Եւ այս տեղ ոչ փոքր ներգործութիւն արեց թէ ,,Այսօր երկնայինք'' շարականը և թէ Վարդուհի Երասխանեանց և Մանուշակ Աղամիրզեանց փոքրիկ օրիորդների կարդացած այս ճառերը։

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՀԱՅՐԵՐ ԵՒ ՔԱՂՑՐ ՄԱՅՐԵՐ,

Ի՞նչ է այսօրեան ուրախութիւնը, որ դուք միացրել էք այս սուրբ եկեղեցւոյ հանդիսի հետ, ի՞նչ է պատճառը, որ այսպէս ուրախ սրտով շուրջ էք բոլորել մեզ և մեր եղբայրները:

Հասկանում եմ, դուք այսօր մեր կոնիցը բռնած, բերում էք մեզ այս տեղ, ուր պիտի մեր մտաղ միտքը սնանի հոգեղէն կերակրով, և լուսաւորուի մեր խաւար կեանքը. մեր սիրաը արոփում ուրախութենից, տեսնում եմ, որ ձեր սիրան ևս նոյն չափով թնդում ուրախութենից:

Փառք քեզ, Աստուած, ինչքան երջանիկ ազգիկներ ենք մեք և ինչպէս բաղդաւոր են մեր սիրելի եղբարքը, որոց Նախախնամութիւնը պարգևել է այսպիսի որդեսէր հոգածու ծնողներ. արդարև երջանիկ ենք, և հրապարակաւ խոստանում ենք ձեր աշխատանքը պտղաբեր կացուցանել, դառնալ խելացի ծնողասէր ու հայասէր զաւակներ, և երբ կարողացանք մեր խոստացածը կատարել, կը համարվենք ձեզ արժանի զաւակներ:

Եղբայրներ, քոյրեր, տեսնում էք մեր պատուական ծնողների ջանքը: Եկէք ուրեմն, ժրաջանութեամբ ուսումն առնունք և իմաստնանանք, ճանաչենք, մեր Քրիստոսի սուրբ հաւատը և մեր դէպի ազգն ունեցած պարտականութիւնքը, որ դիտութեան հետ միասին պիտի ուսուցանեն մեզ մեր պատուելի վարժապետները: Աշխատենք արժանանալ մեր Քրիստոսի սուրբ գրկախառնութեանը. նա մեր հա-

մար է ասել ,,Մի արգելէք մանուկներիդ գալ առիս, որովհետև դոցա է երկնքի արքայութիւնը՝՝: Աղաչենք աստուածեղէն մանուկ Յիսուսը, որ շնորհք տայ մեզ, բանայ մեր մանկական խակ միտքը և մեր բաղդաւորութեան համար:

Պարոն Ալբոխանեանց:

ԱՅՍ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՍ, ՈՐ ԻՄՍ Է, ԼՑԵԱԼ Է:

Այսպէս էր ասում ուրախ մարդը՝ Յովհաննէս Մկրտիչը՝ տեսնելով Յիսուսը եկած աշխարհ և մարդկան ազգի փրկութիւնը մօտեցած:

Այսպէս եմ ասում այժմ և ես, իմ հետ նոյնպէս և իմ պարկեշտասուն ընկերները և սիրելի եղբայրները: Հաստատ գիտեմ, որ դուք ևս, մեր պատուելի ծնողք, նոյնը կասէք: Այս ի՞նչ նշանաւոր օր է Աղուլիսի համար. այսօր սկսում մեր մտաւոր լուսաւորութեան տարեգլուխը, որով և մեր ազատութիւնը տգիտութեան կապանքից:

Շնորհակալ ենք ամենքս ձեզանից, որոնք պատճառ էք դարձել այս մեծ անկշիռ գործին. մեր սիրաը յաւիտեան նուիրուած է ձեզ. մեք չենք մոռանալու ձեր երախտիքը. ես այսօր իմ բոլոր ընկերների հետ աւետում եմ ձեզ նոր օր և նոր յառաջադիմութիւն:

Մանուշակ Աղուզիրզեանց:

Նորանից յետոյ երգուեցան մի քանի ազգային երգեր և ապա 'ի զիմաց Հոգաբարձուներին Պարոն Գասպար Ասլանեանցի կարդացած հետևեալ ճառը և սուրբ պահպանիչը անմոռանալի կացուցին բոլոր հասարակութեան սրտումը այս աւուր հանդիսաւորութիւնը և Աղուլիսի վերակենդանութեան սկիզբը:

ՊԱՏՈՒԵԼԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ։

Պարծանք է ինձ այսօր իմ կողմից և իմ գործակից պարոնների կողմից ձեր առաջև մի քանի խօսք խօսել։ մեք կարդվելով ձեզանից Հոգաբարձական պաշտօնի մէջ, պիտի աշխատինք անպատճառ մեր կարողութեան չափ ձեր դէպ 'ի մեզ ցուցած հաւատը և բարի կարծիքը արդարացնել։ Սկզբնաւորութիւնը, որ մեք արել ենք, մեզ սիրտ է տալիս յետ չմնալ այս ծանր, բայց քաղցր պատասխանատվութենից, ուսիցիչներ հրաւիրելը, ուսումնարանական տների շինութիւնը, և այլ մինչև այսօր մեր արած բոլոր ձեռնարկութիւնների յաջող ընթացքը մեզ յուսադրումեն, որ վերջին օրը պարզ երևսով և մեր պարտականութիւնքը անթերի կատարած կերպիւ պիտի հաշիւ տալու դուրս գանք ձեր առաջև։ Իմ խոստմունքս Աստուծով կը պակուին իրօք և արդեամբք, եթէ ձեր կողմից գործակցութիւն, առ 'ի սրտէ ձեռնտուութիւն լինի մեր նորահաստատ ուսումնարաններին։ նորահաստատ եմ ասում, որովհետև դեռ սկիզբն այսօր ենք դնում։ դեռ տարեգլուխ այսօր ենք համարում։

Փառք Աստուծոյ, արդէն առաջին օրը երևումէ ձեր սրտակցութիւնը։ այսքան բազմութիւն երեխաների հաստատուն առհաւատչեայ են ձեր բարեսիրութեան և ուսումնարանների յառաջադիմութեան։ մեր թանդագին հիւրերի, նորեկ ուսուցիչների ունեցած ջերմեռանդութիւնը մեր ուսումնարանների համար, ոչ պակաս գործակցութիւն է, ոչ պակաս քաջալերութիւն պիտի տայ ձեզ և հաւատի կացուցանէ

թէ սոքա իւրեանց կողմից չեն խնայելու իւրեանց ջանքը մեր երեխաների համար, թէ սոքա, ինչպէս իւրեանց ցոյց տուած ընթացքից և իւրեանց գործի քաջ տեղեկութենից երևումէ, պիտի պսակեն մեր առ նոսա ունեցած յոյսը։ Ոչ մեզանից յետ կը մնայ այս բարի գործին օգնութեան ձեռք երկարացնելուց։ Մեք յոյս ունինք, որ ոչ ոք։

Ստորագրութեանց մատեանները, որոց մէջ ձեզանից մի մասը յաւերժացուցել է մի նշանաւոր գումար, դեռ մեծ յոյս են տալիս շատացնելու իւրեանց յարգոյ ստորագրողաց թիւը։ Դուք պիտի լաւ իմանաք, գիտելով մեր գիւղի ներքին որպիսութիւնքը, որ ստորագրութեան շարունակութիւնը գիտութեամբ դադարեցրած է այսքան միջոց, մինչև անցանի ամառը և ժողովուին մեր օտարութիւն գնացած եղբարքը, և յոյսերս մեծ է, որ այն ժամանակը ևս նոյն ջերմեռանդութիւնը կը գտանեն մեր ուսումնարաններն, ինչ որ գտան ստորագրութեան բացման օրին, երբ 25,000 մանէթ երկու շաբաթի մէջ ժողովեցաւ։

Ու իսկապէս այդպէս ևս պիտի լինէր։ Դուք, որ ուսումնարանի բացման համար սորանից հինգ ամիս յառաջ եղած խորհրդներումը այնպէս յաճախ և ուրախութեամբ ժողովումիք, որ երկու շաբաթի մէջ կանոնաւորութիւնը ուղղեցիք, ստորագրեցիք, Հոգաբարձուքը քուէարկութեամբ հաստատեցիք, որ Աղուլեաց մէջ բոլորովին նոր բան էր, և պատգամաւոր ուղարկեցիք Նորին Վեհափառութեան օծման հանդիսի օրը, խնդրելու ուսումնարանաց հաստատութեան հրամանները։ Դուք մի՞ թէ այսուհետև պիտի սառնասիրտ դտանուիք առ Ձեր ուսումնա-

բանը. ամենևին թոյլ տալ կարող չեմ այդպիսի տխուր կարծիք, այլ բոլորովին հաստատ եմ իմ ամենալաւ յոյսերի վերայ Ձեզանից։

Դուք, յարգոյ հանդիսականք, գիտէք, ինչքան մեծ դժուարութիւնների և արգելքների յաղթել էք Դուք ձեր յօժարակամ զոհաբերութեամբք. դուք մի այնպիսի հաստատ հիմք էք ձգել, որպիսի ոչ մի հայկական ուսումնարան չունի։ Լաւ նայենք մեր ազգային ուսումնարաններին, չենք գտանելու բոլոր Պովկասումը և ոչ միմը, 'ի բաց առեալ Տփխիսու Ներսիսեան ուսումնարանը, որ ժողովրդի սեպհականութիւն լինի՝ իսկապէս խօսելով։ Ներսիսեան Դպրոցն ևս բոլորովին հիմնուած է ուխտատեղիների և վանքերի արդեանց վերայ. 'ի հարկէ վանքերն և ուխտատեղերն ևս ժողովրդեան սեպհականութիւն են, սակայն այնքան յարատև չէ նոցանից յառաջացած արդիւնքը, որքան մեր սեպհական արծաթով հաստատուածները. այդ պատճառով ևս միւս ազգային ուսումնարանները զանազան առաջնորդների իշխանութեան ներքոյ զանազան փոփոխութեանց են ենթարկվում, նկատելով առաջնորդի լաւ կամ վատ ուղղութիւնը, իսկ մեր ուսումնարանը միշտ կարող է լաւ ընթանալ, կարող է հաստատ լինել, եթէ մեք, Աղուլեցիքս միաբան և սիրով մնանք միմեանց հետ և չդադարենք առ 'ի սրտէ մանակից լինել հասարակաց գործին։

Մեք ամենքս վաճառական մարդիկ և օտար քաղաքների այցելուներ ենք. եթէ ոչ ուրիշները, մեք պիտի լաւ իմանանք, և խոստովանենք ևս թէ ինչքա՞ն մեծ ծախք է նստում օտար տեղ մանուկ

կրթելը, ի՞նչ հետևանք է ունենում մանուկը տասը տարեկան հասակում մայրական քաղցր գրկից խլելը և օտարութեան մէջ ճնշելը, ի՞նչ վատ ազդեցութիւն ունի մեր զուարթ մանուկների վերայ օդի և առ հասարակ՝ եղանակի և կեցութեան փոփոխութիւնը, քանի՞ առոյգ և քաջակազմ մանուկներ գնացել են, և թոյլ կուրծքով ու կարճատև կեանքով յետ են եկել. այլև, քանիսը զոհ են գնացել անգութ մահի հարուածին։

Բայց թէ մանուկը մեծանայ իւր մայրենի հողի վերայ, աճի և զարգանայ իւր մայրական գրկի մէջ. սկզբնական դաստիարակութիւնը ստանայ իւր հայրենիքում, ամրանայ նորա կազմուածքը և ապա եթէ կամք ունէր, գնայ բարձր ուսումնարաններում կատարելագործվելու, դորա հետևանքը իմ կարծիքով, երբէք լինելու չէր այնպէս կորստաբեր. և ի՞նչ էք կարծում այս է միայն հետևանքը։

Մի փոքր ևս որպէս ՝ այ մտածենք. մանուկը տասն տարեկան հասակում, առանց իւր ազգային լեզուն գիտելու, խլենք հայրենիքից և տանենք օտար աշխարհ, նորա ստացած դաստիարակութիւնը այդ օտարութեան մէջ համաձայն կ'լինի մեր ծնողներիս ցանկութեանը. այն երեխան կ'իմանայ իւր պարտականութիւնքը առ իւր եկեղեցին, առ իւր ազգը, կը գիտենայ իւր մայրենի լեզուն։ Դժուար թէ։ Եւ մի՞ թէ այսպիսի պատանիք են մեր ցանկացածը—՞չ երբէք։

Ամեն հայր, որ ուղարկում է իւր որդին օտար տեղ կրթուելու, նորա խորհուրդն այս է, որ տեսանէ իւր որդին արժանի ժառանգ հօրը, հարա-

զատ զաւակ Հայրենական եկեղեցւոյ և ճշմարիտ ազգասէր, ի՞նչ առնէ խեղճ պատանին, եթէ չէ ուսել այդ բաները, եթէ յիշեալ պարտքերը նորան անծանօթ են մնացել. նա միայն պիտի ընթանայ համաձայն իւր ստացած ուղղութեանը:

Ես չեմ ասում, թէ մեր ամեն ուղարկվածները այդպէս են յետ գալիս. փառք մեր խնամակալ Պայսեր մարդասէր կառավարութեանը, Ռուսաց տէրութեան շնորհիւ մեր պատանիքը յետ են գալիս այն տեղից բոլորովին համաձայն մեր նպատակին. նոքա Ռուսաստանի բարձր ուսումնարաններում կրթվելուց յետոյ ուսանումեն առանձին և Իւրեանց մայրենի լեզուն, նուիրումեն Իւրեանց անձը Հայրենեաց ծառայութեանը և հայոց մանուկների դաստիարակութեանը, և այսպիսիք են, որ մեք ունինք. բայց ամե՞նքն այսպէս են յետ գալի, ամե՞նքի մէջ մի և նոյն զգացմունքն են լինում. ցաւելով պիտի ասեմ, ո՛չ: Շատերը բոլորովին յետ են գալի Իւրեանց մայրենի լեզուին անտեղեակ, որով և օտար ամեն ազգասիրական զգացմունքից: Այսպիսի երիտասարդները՝ թէև ուսումնականք, թէև բանազէտք, բայց մեր ազգի ներկայ դրութեանը և վիճակին անպէտք: Այսպիսիների վերայ է իմ ցաւս:

Այս բոլոր բաներիս քաջ ուշադիր լինելով Դուք, զովանի ջանադրութեամբ և միաբան գործակցութեամբ հիմնեցիք ուսումնարանքը, այսօր կատարումք բացման հանդէսը և կամենումք յառաջ տանել Ձեր գործը: Եւ որովհետև մեզ էք յանձնել այս ուսումնարանների կառավարութիւնը, մեք ևս պիտի աշխատինք արդիւնաբերութեամբ ժամանակին յետ տալ ձեզ ձեր աւանդը: Դուք ևս պիտի անտես չառնէք մեր խնդիրը և ձեր կողմից ձեռնտու լինիք մեզ: Ձեր նուիրած մայր գումարից ստացած տոկոսիքը բաւական չեն այս մեծ գործի պիտոյքը լցուցանելու. ձեր կանոնադրութեանց համեմատ պիտի նպաստամատոյց լինին և աշակերտաց վճարելի թոշակները, ուրեմն՞ լ կը լինի այն հայրը, որ իւր զաւակի ուսման թոշակը չէր կամենալու օր մի յառաջ վճարել, ինչո՞վ պիտի հոգալ այսքան մեծ ծախքերը, մանաւանդ այս տարու ծախքերը, ձեզ լաւ յայտնի է, որ մեծ գումար նստեցաւ այս տարում արած ամենահարկաւոր շինութիւնքը, ուսումնարանի: Այս բաներիս տեղեակ լինելով ամեն մինը Ձեզանից, կարծեմ որ ոչ ոք հրաժարուելու չէ լցուցանել իւր պարտքը:

Խօսքիս վերջումը խնդրում եմ յարգոյ հասարակութենից երկարութիւն կենաց մաղթել Մեր Օգոստափառ Պայսերը Ալեքսանդր Նիկոլայեվիչին և նորա Սեմափայլ Եղբօրը, Կովկասեան փոխարքային, Միխայել Նիկոլայեվիչին, որ տուել են ամենայն արտօնութիւնք Իւրեանց հպատակ ժողովրդին այնպիսի բարի ձեռնարկութիւններ առնելու. երկարութիւն կենաց մեր Սեհափառ Հօրը՝ Տէր Գէորգ Կաթուղիկոսին, որ հայրաբար շնորհեց մեր ուսումնարանների հաստատութեան հրամանները և ընդունեց իւր անմիջական բարձր հովանաւորութեան ներքոյ:

Շնորհակալութիւն և յարգոյ հասարակութեանդ, որ այսպիսի մեծ եռանդեամբ սկսեցիք այսքան ազգօգուտ փառաւոր գործ. շնորհակալութիւն նոյնպէս

և բոլոր աշխատակիցներին, խորին սրտէ շնորհակալութիւն և պարոն Պերճ Պռոշեանցին, որոյ ջերմեռանդ աշխատութիւնը ուսումնարանիս վերայ անմոռանալի յիշատակ կը մնայ Աղուլեաց մէջ, շնորհակալութիւն և մեր յարգոյ ուսուցիչներին և ուսուցչուհոյն, որ յանձն են առել այս ծանր պաշտօնը ՝այ զաւակների յառաջադիմութեան համար. յոյս ունինք, որ սոքա ևս անպտուղ չեն թողնելու մեր նոցա վերայ ունեցած բարի յոյսը և հաւատը:

Դուք ևս, մեր ազնիւ մանուկներ և պարկեշտ աղջիկներ, տեսնում էք թէ մեք ձեր հայրերս և մայրերը ինչ մեծ սիրով աշխատում ենք ձեր յառաջադիմութեան և լուսաւորութեան վերայ, դուք ևս աշխատեցէք պարզերես կացուցանել թէ ձեր վարժապետները և թէ արդիւնաբեր առնել մեր աշխատութիւնքը. ջանացէք, վերջումը ազգի արժանի որդիք լինիլ, և երբ ուսման մէջ յառաջացած և ձեր պարտքը հասկացած կը լինիք, յիշեցէք ձեր ծնողների երախտիքը և այս ուսումնարանի հաստատութեան բոլոր պատճառքը:

Միաբերան Աղաչենք Աստուած, որ հաստատ և օգտաւէտ առնէ մեր ուսումնարանը. ամէն:

Ի կողմանէ հոգաբարձուներին ասաց
Գասպար Գ. Ալանեանց:

Այս աւուր հանդէսը փառաւոր առնելու համար սուրբ Գրիգորափոր եկեղեցւոյ մերձակայ Աղուլեցւոց ամենքի տանն ևս հրաւէրք էր և մեծ ուրախութիւն. մի խումբ երեխաներ երգեր երգելով մեծ բազմութեան հետ այսօր ճաշեցին Աղա Մկրտիչ

Տէր Մկրտչեանցի տանը, ուր մեծ բարեմաղթութիւնք եղան 'ի պատիւ այս աւուր հանդէսին:

Միւս օրը, 27 ին հոկտեմբերի, 22 աղջկունք շարունակեցին ուսումը, իսկ տղայոցը երկու ամիս էր, որ սկսվել էր: Թէ տղայոց և թէ աղջկանց թիւը օրէ օր աւելանում է*) շատ ու շատ ուրախացնելով ժողովրդի ՝ոգաբարձուների և ուսուցիչների սիրտը**):

Երեք օրից յետոյ համաձայն օրիորդաց ուսումնարանի կանոնադրութեանը ընտրվեցան հոգաբարձուհիք հետևեալ տիկինները, վճարելով տարեկան վեց մանեթը:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՀԵԱՑ ՆՈՒԻՐՔՆ ԵՒ ԱՆՈՒԱՆՔՆ ԵՆ:

1. Էղիսաբէթ Տէր Մկրտչեանց.
2. Պարբա Տէր Մկրտչեանց.
3. Նինոյ Տէր Մկրտչեանց.
4. Սոփիա Տէր Մկրտչեանց.
5. Եկատարինէ Տէր Մկրտչեանց.
6. Թագուհի Աբրասխանեանց.
7. Նազլու Աբրասխանեանց.
8. Խալասան Աբրասխանեանց.
9. Սոփիա Աբրասխանեանց.
10. Ելմաստ Փանեանց.
11. Ջանազան Փանեանց.
12. Մարիամ Ալանեանց.
13. Մանուշակ Ալանեանց.
14. Աննա Թովմասեան Թևումեանց Խայարդինա Երևանցի.
15. Անդուխտ Գիւլումեանց Աղեսանդրապոլցի.

---

*) Ներկայումս են 46 աշակերտուհիք և 110 աշակերտ:

**) Ուսուցիչներն են, Մեսրոպ քահանայ Փափազեանց, Տիկին Մարիամ Գիւլզատեանց, Նոյն և վերակացուհի, Ռուբեն Ջալալեանց, Սամուէլ Գիւլզատեանց, Աբգար Գիւլումեանց, Արտաշես Յակոբեանց և Պ. Պռոշեանց:

16· Սաթինիկ Չալալեանց Երևանցի·
17· Աննման Սալանեանց·
18· Թագուհի Հախնազարեանց·
19· Հռիփսիմէ Տէր Յանեանց·
20· Թագուհի Կոնսանդինեանց·
21· Նինոյ Հախնազարեանց·
22· Գուրջիհուն Աղամիրզեանց·
23· Ալմաստ Աղամիրզեանց·
24· Բալասան Աղամիրզեանց·
25· Մարիամ Գուլզարեանց·
26· Խոսրովնդուխտ Բեգլարեանց·
27· Սոփիա Խօջամիրեանց·
28· Անթառամ Փանեանց·
29· Ոսկի Բեգլարեանց·
30· Աննա Թաթոսեանց·
31· Հերիքնազ Սալանեանց·
32· Օտաղեկ Տէր Մուքայելեանց·
33· Անահիտ Մ՝հի՞ Սաեփանեանց·
34· Թագուհի Դեկարխանեանց Երևանցի·
35· Մարթա Վարդանեանց·
36· Մարիամ Թանգինանց·
37· Սարրա Փանեանց·
38· Ալմաստ Փանեանց·
39· Վարդուհի Փոնեանց·
40· Զումրուխտ Փանեանց·
41· Աղեսաբէթ Իշխանեանց·
43· Աննա Խօջամիրեանց·
44· Հռիփսիմէ Հախնազարեանց·
45· Երանեակ Բարխուդարեանց·
46· Եկատարինէ Դաւիթեան·
47· Նինոյ Մարկոսեանց·
48· Աննա Ներսեսեանց·
49· Չաւահիր Ներսեսեանց
50· Սոփիա Աւետիսեան Ներսեսեանց·
51· Տիկին Իզմիրեանց·
52· Թագուհի Մարգարեանց
53· Աննման Մարգարեանց·
54· Թեկղե Յակոբեանց·
55· Զաւէ Բարխուդարեանց·
56· Ալմաստ Բարխուդարեանց·
57· Զաւղամ Բարխուդարեանց·

Ապա սոքա իւրեանց միջից ընտրեցին Տեսչուհի ուսումնարանիս գերապատիւ Տիկին Աղեսաբէթ Տէր Մկրտչեանցը և նորան օգնական Տիկին Թագուհի Հախնազարեանցը։

Այս երկոքեանն սիրով յանձն առան այս ծանր, բայց քաղցր պարտականութիւնը, և յոյս ունինք որ կ՝արդարացնեն Աղուլիսի Տիկնայց առ նոսա ունեցած բարի հաւատը։

Աւելորդ է ինձ նոր 'ի նորոյ կրկնել, թէ ի՞նչ մեծ գործ գործեցին Աղուլեցիք և թէ ամեն ազգասէր սրտերի որքան ուրախութիւն կ՝լինի լսել սոյն աւետիսը։

Այս ամենը ցոյց են տալիս ընդհանրապէս Հայ ազգի առ ուսումն և լուսաւորութիւն ունեցած սէրը։ Ստուած տայ, որ Աղուլեաց ուսումնարաններն չենթարկվէին մի քանի իւրեանց նմանների ճակատագրի դառն հարուածին։ Յողովուրդը չինայից իւր կողմից ոչինչ զոհաբերութիւն, բացեց ուսումնարանքը, և միայն մեր սրբազան պաշտօնէից գործակցութիւնն է մնում առաջնորդելու այս բարի ձեռնարկութեանցը. թող, ուրեմն, Աղուլեաց մանկանց և փոքրիկ աղջիկների ձայնը և տնմեղ բերանի խընդրուածքը հասնի մեր սուրբ հայրը չզրկել իւրեանց ազգասիրական գործակցութիւնը այսպիսի բարի ձեռնարկութենից։ Մեր Վեհափառ հօր ազգասիրութիւնը և ուսումնասիրութիւնը խրախուսեց Աղուլեցիներին սկսել այս գործը, նորա կոնդակները արեցին իւրեանց մեծ ազդեցութիւնը և մեր լուսաւորչական եկեղեցւոյ որ բարեխորհուրդ սուրբ պաշտօնեայն իւր կողմից չէր կամենալու ազգասիրական

աչքով նայել այս գործոյն, այսպէս ոչ զգայուն ։այը պատկառանօք և ակնածութեամբ չէ նայելու իւր որդւոց բարին ցանկացող հոգևորականութեանը։

1864 թուին, Ղարաբաղի օրիորդաց ուսումնարանի հանդիսի նկարագրողը իւր խօսքը վերջացրել էր մաղթանքով, որ Ղարաբաղցոց օրինակին շաւերը հետևին, իսկ ես մաղթում եմ Աստուծուց, ոչ միայն աճեցնէ Աղուլեցւոց օրինակին հետևողներ, այլ և յարատև առնէ այսպիսի ձեռնարկութիւնքը. ապա թէ ոչ, ի՞նչ օգուտ զարնան նման ծաղկելը և շուտով անմիաբանութեան և չարամտութեան արևով կիզուիլն և չորանալն։

Պ. Պոլչեանց։

«Ազգային գրադարան»
NL0345267